



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅՍ. ՇԻՊՈՎ

Ի Ն Չ Պ Ե Ս Ե Ա Պ Ր Ո Ւ Ս
Գ Յ Ո Ւ Ղ Ա Ց Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը
Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Ս

321.95

Շ-62

ԳՅՏԶՐԱՑ

1931

ՈՍՐԵՎԷՆ

15 JAN 2010
26 SEP 2006

321-95
70-62
wy

ՅԱ. ՇԻՊՈՎ

**Ի Ն Չ Պ Ե Ս Ե Ա Պ Ր Ո Ւ Մ
Գ Յ Ո Ւ Ղ Ա Ց Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ**

2051

Թարգմ. Գ. ԶԱՆԻՔԵԳՅԱՆ



ՊԵՏՆԱԳՐԱՑ

ՅԵՐԵՎԱՆ

228

15 JUL 2013

15964

ՊԵՏՏՐՈՍԻ ՅՊԱՐՄՆ
ՊԼԱՎԼԻՏ 6843 (Բ)
ՇՐԱՏԱՐԱԿ № 1843
ՊԱՏՎԵՐ 6141
ՅՈՒԱԾ 3000

ԱՆԳԼԻԱՆ ՅԵՂ ԷՆԴԿԱՍՏԱՆԸ

Հնդկաստանը «Բրիտանական իմպերիայի սիրտն է», ինչպես և յերբեմն ըստ բուրժուական գրողների ավելի ճարտասան արտահայտութեան՝ դա բրիտանական թագի ամենալավ՝ աղամանդն է: Սա զուր չի ասված: Անգլիական կապիտալիստները կողոպտում են յերկրագնդի բոլոր մասերը, բայց ավելի շատ հարստութիւն նբանք զուրս են բերում Հնդկաստանից, մի յերկրից, վորի ժողովրդին՝ րանք հասցրել են պարբերաբար կրկնվող մասսայական սովադուլների: Մի ժամանակ հարուստ, ծագկած յերկիրը, շնորհիվ անգլիական բուրժուական բորենիների, հասել է ոյն աստիճանի, վոր ազգաբնակչութիւնը համարյա թե դադարել է աճելուց:

Հսկա հեղափոխական շարժումը, վոր սուանձնացեա ուժեղացել է վերջին ամիսների ընթացքում, ասվելի ու ավելի յե լայնանում և խորանում: Այս շարժման թափն ու բավանդակութիւնը ներկայումս այնպիսի վիճակումն է գտնվում, վոր նույնիսկ բուրժուական գրողները ստիպված են խոստովանել, վոր մենք մտնում ենք խոշոր հեղափոխական դեպքերի շրջանը:

Այսպիսի պայմաններում, յուրաքանչյուր դիտակից բանվոր և գյուղացի, պիտի ծանոթ լինի այս խոշոր յերկրի՝ «Բրիտանական իմպերիայի սրտում» աե-

զի աւանցող դատակարարային պայտարէն վերաբերող
գլխավոր փաստերին:

Հնդկական հսկայական իմպերիան իր տարածու-
թյամբ հավասարվում է վողջ Յեվրոպային, (առանց
Խուստտանի մինչպատերազմյան սահմաններով): Հա-
վիտենական ձյունով պատած Հիմալայան լեռնաշղթ-
թան կազմում է այս լայնածավալ յերկրի հյուսիսային
սահմանը: Հյուսիս-արեւմուտքում և հյուսիս-արեւելե-
քում, բարձր լեռները փակում են մուտքը, ինչպես և
յեւրջը, բացի մի քանի նեղ անցքերից և կիրճերից:
Մյուս բոլոր կողմերը սահմանադժված են ծովով:

Հնդկական իմպերիան իրենից ներկայացնում է
4-675-535 քառ. կիլոմետրանոց մի տերիտորիա: Նրա-
նից 2-834-070 քառ., կիլ. կազմում է բրիտանական
Հնդկաստանը, իսկ 1-841-465 քառ. կիլմ. այսպես կոչ-
ված Հնդկական պետութիւնները, վորոնք նույնպէս
զտնվում են՝ այսպես ասած անգլիական «հովանավո-
րության» ներքո: Հնդկական իմպերիայի վողջ քաղաք-
ների և գյուղերի թիվը հասնում է 690,316, նրանցից
2-316 քաղաքներ են, իսկ 688-000 գյուղեր:

Հնդկաստանը բաժանվում է՝ 1) 9 նահանգների՝
նահանգապետներով, նահանգական որենսդրական
խորհրդով և յերկու-յերեք ընտրական նախարարնե-
րով, 2) 6 գավառների՝ կոմիսարներով, առանց որենս-
դրական խորհրդի: Գնեիքալ նահանգապետը, նահան-
գապետները և գլխավոր կոմիսարները նշանակվում են
իմպերատորի, այսինքն անգլիական թագավորի կողմ-
ից:

Համաշխարհային պատերազմը մեծ փոփոխու-
թիւններ բացրեց Անգլիայի և Հնդկաստանի հարաբե-

րակցութեան մեջ: Ազգային արդարաբարութիւնը
սկսեց աճել և զարգանալ. զգալիորեն աճեցին նաև
պրոլետարիատը և նրա հեղափոխական շարժումները:
Հարյուր հազարավոր հնդիկ զինվորների քել էյին սյա-
տերապմ: «Դեմոկրատիայի» դրոշի տակ տանկով այս
իմպերիալիստական սպանդը, անգլիական կառավա-
րութիւնը խոտոտեցել էր Հնդկաստանին ինքնավարու-
թիւն: Բայց խոտոտմը մեաց լոկ խոտում, միայն
1919 թվին անգլիական կառավարութիւնը Հնդկաս-
տանին տվեց սահմանադրութիւն, վորով յերկրի ազ-
գաբնակչության 98 տոկոսը չստացավ ամենաչնչին
ընտրողական իրավունքներն իսկ, ևս չենք խոտում
հնդկական գործերին լուծում տվող, իսկական իրտ-
վունքների մասին:

Համաձայն 1919 թվի սահմանադրության, բրիտա-
նական Հնդկաստանը ունենում է վորպես բարձրագույն
պալատ—պետական խորհուրդ՝ 27 նշանակովի և 33
ընտրովի անդամներով, և որենսդրական խորհուրդ՝
41 նշանակովի և 104 ընտրովի անդամներով: Ազգա-
բնակչության միայն 2 տոկոսն է ոգտվում ընտրողական
իրավունքներից: Որենսդրական խորհուրդների իրա-
վունքները սահմանափակված են, մասնավորապես Փի-
նանսներին վերաբերող հարցերը հանված են որենս-
դրական խորհուրդներից: Գլխավոր նահանգապետը,
վարը և հանդիսանում է փոխարքան, իր մաս ունի
գործադիր խորհուրդ, վորի 7 անդամը նշանակվում
են թագավորի կողմից: Առանձին պետութիւններին
վերաբերող գործերի մասին գլխավոր նահանգապետը
խորհրդակցում է իշխանների խորհրդի հետ:

Այսպիսով, ազգաբնակչության ճնշող մեծամաս-
նութիւնը, իրավունք չունի ընտրելու ինչ վոր վողոր-

մելի արեհողքակա՞ն, իսկ իրակտնում ավելի շուտ խոր-
հըրդակցական հիմնարկներին: Իշխանութիւնը ամբող-
ջովին դռնվում է նահանգապետների և անդլիական կա-
պիտալի այլ դործակաւորների ձեռքում:

ԱԶԳԱՐՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հնդկաստանի ազգարնակութիւնը ներկայումս
վողջ իմպերիայում կազմում է 318.942.480 մարդ, իսկ
Բրիտանական Հնդկաստանում՝ 247.002.293 հոգի: Յե-
թն վերցնենք քաղաքի և գյուղի ազգարնակութեան
ստորաբաժանումը, այն ժամանակ կտեսնենք. վոր քա-
ղաքներում՝ 32.475.276 մարդ է, իսկ գյուղերում՝
286.467.204 հոգի: Սույն ավայրները վերաբերում են
1921 թվին: (Վերջին տարիների հաշվառումն է) 1911
թվի համեմատ (նախորդ հաշվառումն է) ազգարնա-
կութիւնը ավելացել է միայն 1,2 տոկոսով:

Սա նշանակում է, վոր ազգարնակութիւնը հա-
մարյա թե դադարել է աճելուց: Անդլիական բուրժուա-
կան դրողներ այս յերեւոյթը համարում են «բնա-
կան»: Հնդկաստանում մալարիայի, դանազան հիւան-
դութիւնների և ժանտախտի հետեւանքով մահացու-
թիւնը մեծ չափերի յե հասնում: Կենտրոնական նա-
հանդներում՝ Բեռարայում, Բիխորում և Որիսեյում,
նաև Բոմբեյում այս տասնյակ տարիների ընթացքում
Չերմախտը կասեցրել է ազգարնակութեան աճումը:
1901-1911 թ.թ., այս 10 տարւոյ ընթացքում. ժանտախ-
տը լայնել է 6 և $\frac{1}{2}$ միլիոն ժողովուրդ: Քչերը չեն մա-
հանում նաև խոլերայից, վորն առանձնապէս հաճա-
խակի թաղավորում է Արեւիկայան նահանգներում:

Սակայն շատ պարզ և հասկանալի չէ. վոր այսպէս

կողմէն նրեակա՞նն տաւաճաւորը իրենց հերթին հան-
գիսնանում են ժամանակակից Հնդկաստանի հասարա-
կական կառուցվածքի արդյունքները: Կալվածատերերի,
կնյաղների, վաշխատուների և անդլիական իմպերիա-
լիստների կողմից, անասելի վայրագորեն չահագործ-
վող աղքատ ու խավար գյուղը, ի վիճակի չէ պայքա-
րելու հիւանդութիւնների դեմ և չի կարողանում ըս-
տեղծել համաճարակները կանխող պայմաններ:

Իլլյուստրացիայի համար բերենք այն փոքրիկ նկա-
րագրութիւնը, թե 1918 թ. Չերմախտը ինչպիսի հետե-
վանքներ է թողել գյուղի վրա: (Հնդկական 1928 թվի
տարեցույցից):

«Մահացութեան թիւը առանձնապէս բարձր էր չա-
փահասների (20-40 տարեկան), մանավանդ հասակով
կաճանց մեջ, ընդհանրապէս հղի շնանոր համար այդ
հիւանդութիւնը կործանարար էր: Խոչոր թիւով գյու-
ղեր բուրդովին բնաջինջ են յեղել հիւանդութիւննե-
րից: Մի ժամանակ այլևս հնարաւորութիւն չէր լի-
նում գիակները թաղելու. դաշտերն ու արտերը մնացել
էին առանց հավաքելու, և բոլոր տեղական պաշտոնա-
կան հիմնարկները չէին աշխատում, վորովհետև ծա-
ռայողների մեծ մասը բռնվել էին համաճարակով:
Չերմախտի կատարած այս ավերածութեանն ավելա-
ցաւ նաև մի շարք նահանդներում առաջացած ծննդա-
բերութեան կասեցումը, վորովհետև այդ տարին հա-
զուտտեղների գինը շատ բարձր էր, շատերը հնարաւոր-
ութիւն չունէին համաճարակի ավելի ուժեղացման
մոմենտին—նոյնմբեր ամսին, ապահովվել տալ շորե-
քով, վորը հիւանդների ամենաառաջին անհրաժեշտու-
թիւնն էր կազմում: Հիւանդութեանը առանձին նա-

հանդիսերում շարունակվում եր, և 1919 թվին խոշոր մահացու ավերածութուն կատարեց Բենդախայում և Միացյալ-գավառներում... Առանձին աղբյուրներից քաղված թվերը ցույց են տալիս, վոր 1918 թվի համաճարակին 7·100·000 մահացածների վրա ավելացնելով նաև 1919 թվի 1 և $\frac{1}{2}$ միլիոնը, ընդհանուր թիվը մոտավորապես հասնում է 8 և $\frac{1}{2}$ միլիոնի:

Սակայն պաշտոնական տարեցույցը հաստատում է, վոր վերահիշյալ թվերը իրականից ցածր են: Այնինչ, իրականում, այդ տարիներում ջերմախտից մահացածների թիվը պիտի հաշվել 12-13 միլիոն: Ահա այս նկարագրությունից պարզվում է, թե ինչպես գյուղի աղքատությունը նոյաստում եր չարիքին: Աղբյուրակա թյան աճման կասեցումը չի սահմանափակվում միայն հիվանդություններով: Սրան անհրաժեշտ է ավելացնել և այն, վոր Հնդկաստանում յերեսխանների մահացությունը, վորը հանդիսանում է բոլոր հետամնաց յերկրների չարիքը, շատ մեծ ծավալների յե հասնում: Յեվ սա տեղի յե ունենում, չնայած նրան, վոր ծնողների թիվը այս յերկրում խոշոր է: 1911-1921 թ. թ. հաղար հոգուց, ծնվողները կազմում եյին 36,6, բայց դրա դիմաց մահացածների թիվը հաղարին միջին թվով հասնում եր 33,9: Յերեսխանների $\frac{1}{6}$ մասը մահանում եր մինչեվ 1 տարեկան հասակը: Խոշոր և նաև ծընընդհանների մահացություն թիվը:

Չգալի դեր է խաղում նաև սովը: Վոչ մի տեղ սովը այնպես սիստեմատիկ կերպով չի կրկնվում, ինչպես Հնդկաստանում, և վոչ մի վայրում այնպիսի կործանարար հետեվանքներ չի ունենում, ինչպես անգլիական այս մեծ գաղութում: 1880-1887 թ. թ.

սովը ընդգրկեց 47.500.000 աղբյուրակա թյամբ— 180.000 քառ. մղոն տարածություն: Միայն Որիսսում սովից մահացել են մեկ միլիոն հոգի: Սրան հաջորդում է նաև 1886 թվի Մադրասում և 1868 թ. Արևմտյան Հնդկաստանում տեղի ունեցող սովը: Սրա հետևյալն էր յեղավ այն, վոր Մարվարի 1 և $\frac{1}{2}$ միլիոն աղբյուրակա թյունից 1 միլիոնը գաղթեց: Հետո 1873-74 թ. թ. Բիխարայի և 1876-1878 թ. թ. Հարավային Հնդկաստանի մեծ սովը: Վերջինը ընդգրկել եր Մադրասը, Մասորը, Խայդերաբադն ու Բոմբեյը, վոր տեղի է 2 տարի և յերկրորդ տարին տարածվել է կենտրոնական և միացյալ գավառների վորոշ մասերն ու Պենջաբի մի փոքրիկ մասը: Այս ամբողջ տերիտորիան կաղմում եր 257.000 քառ. մղոն 58.500.000 աղբյուրակա թյամբ: Այս սովի արդյունքը յեղավ այն, վոր միայն Բրիտանական Հնդկաստանում վոչնչացավ 5.250.000 մարդ: 1899-1900 թվերին, սովն ընդգրկեց 59.500.000 աղբյուրակա թյամբ 475.000 քառ. մղոն տարածություն: Այս սովը առաջ յեկավ յերաշտից և անասունների անասելի կոտորածից: Նրան զուգակցում եր խոլերայի և մալարիայի խիստ համաճարակը:

Վերջին հարյուր տարվա ընթացքում, Հնդկաստանում տեղի յեն ունեցել 30 մեծ սովի դեպքեր, վորոնք վոչնչացրել են 32.000.000. կյանք: Սրանք Հնդկաստանի վրա ունեցած Անգլիայի «բարեգործ» աղբեցություն ցուցանիչներն են: Անգլիայի քաղաքակիրթ դերը ընդգրկում է նրանով, վոր մի ժամանակվա հարուստ յերկիրը, դարձել է ժանտախտի, խոլերայի, մալարիայի և սարսափելի սովի կենարան, վորոնցից վոչնչանում են միլիոնավոր մարդիկ:

Հնդկաստանի աղբյուրակա թյունը բնակվում է

գյուղերում և պարապտում գյուղատնտեսութեամբ և
 Ընդհանուր առմամբ Հնդկաստանի քաղաքի ազգաբնու-
 կությունը կազմում է միայն 10 տոկոսը: Նրանց թիվը
 անում է շատ դանդաղ. 30 տարվա ընթացքում նրանք
 ավելացել են 1 տոկոսից վոչ ավելի: Իրենց կրոնական
 դավանանքով, ազգաբնակչությունը հիմնականում բա-
 բաժանվում է՝ հնդիկների՝ մոտ 217 միլ. և մահմեդա-
 կանների՝ մոտավորապես 70 միլիոն:

Ազգաբնակչության լեզուն բազմախառն է, ասո-
 ցույց դրան, բավական է նշել, վոր Հնդկաստանում
 խոսում են 222 լեզվով և բարբառներով: Պիտի հիշել և
 կոստանների գոյություն մասին: Հնդկաստանում գրանց
 թիվը շատ է: Կաստաներին պատկանելը վորոշվում է
 ծագումով: Պրոֆեսոր Նայրաիլը խոսում է 7 հիմնա-
 կան տիպի կաստաների գոյություն մասին՝ ցեղական,
 պրոֆեսիոնալ, սեկտանտական և ազգային կաստաներ,
 վորոնք առաջ են յեկել սովորությունների փոփոխ-
 ման, խառնուրդի և դաղթի հետեվանքով: Վորպես
 պրոֆեսիոնալ կաստայի, որինակ կարելի յե բերել Դը-
 խորներին (լվացարարներ), ՆԱՅԻՆՆԵՐԻՆ (վարսավիբ-
 ներ), և վորոշ զինվորական կաստաների: Սկզբներում
 գոյություն են ունեցել 4 կաստա՝ Բրամիններ, Կշա-
 տրիններ, Վայիններ և Շուդրիններ: Բրամինները՝ կրո-
 նին ծառայողներն են, Կշատրինները՝ զինվորներն են,
 Վայինները՝ հողագործներն ու վաճառականները,
 և Շուդրինները կամ Սուդրինները՝ սել աշխատանքնե-
 րին և այս 3 բարձր կաստաներին ծառայելու դատա-
 պարտվածներն են: Բացի դրանցից գոյություն ունեն
 Պարիաներ, վորոնք «պղծված են» համարվում և որեն-
 քով նրանց չի կարելի ձեռք տալ:

Կաստաների գոյությունը արդենակ և հանդիսա-

նում Հնդկաստանի գաղափարներ: Ավելացնենք նաև
 այն, վոր ըստ 1921 թվի տվյալների, ազգաբնակչու-
 92 տոկոսը անգրագետ է:

Ազգաբնակչությունը ըստ աշխատանքի բնույթի
 բաժանվում է հետևյալ կերպ՝

Գյուղատնտեսութեամբ և անասնապահութեամբ զբաղ.	2,9 045,015 և.
24 հորսութեամբ և վորսորդութեամբ .	1,607,331 »
Արդյունարելութեան միջ	33 167,018 »
Հանրային արդյունաբերութեան միջ .	542,903 »
Տրանսպորտի (ավելացնելով գրան փոստ, հեռագիր և հեռախոս)	4,331,051 »
Առևտրի միջ	18,114,62 »
Բանակի և նավատորմի	757,904 »
Վաստիկանություն	1,124,610 »
Ոլալին նավատորմի	1,033 »
Հասարակական և վարչական աշխատանք	2,643 882 »
Լիբերալ պրոֆեսիա և կեղտ. վեստ	5,020,571 »
Տնային աշխատանքներում	4,570,151 »
Ուրիշ	11,831,943 »

Ընդհանրապես հողագործութեամբ, անասնապահու-
 թեամբ և վորսորդութեամբ ապրում է ազգաբնակչու-
 73 տոկոսը, արդյունաբերութեան մնացած ճյուղերում
 զբաղված է միայն 10 տոկոսը: Հետաքրքրական են
 այն տվյալները, թե ինչպես 1921 թվին (վերջին հաշ-
 վառումը 1921 թվին էր) համեմատած 1911 թ. (նախորդ
 հաշվառում) հետ, փոխվում է ազգաբնակչության պրո-
 ֆեսիոնալ կազմը: Դուրս է գալիս, վոր անասնապահու-
 թեան, հողագործութեան և վորսորդութեան բնադա-
 վառում ավելացել են 1,8 տոկոսով, հանքերում և հան-

Քահարեբուժ անխառնողների 2,3 տոկոս, բայց գրա-
դիմաց արդյունաբերութեան մեջ պակասել են 6 տո-
կոսով, իսկ տրանսպորտում նույնիսկ 13,8 տոկոսով :
Ընդհանուր առմամբ, արդյունաբերութեան մեջ զբաղվողների մա-
սին տվյալները, գլխավորապես վերաբերում են տնայ-
նագործ արդյունաբերութեանը, սակայն, այնուամե-
նայնիվ սույն ցուցանիշները ցույց են տալիս աճումը
գյուղատնտեսության բնագավառում : Սրանք հակա-
սում են այն բոլորին, ինչ մենք սովորական դիտում ենք
յեվրոպական և այլ յերկրներում :

Սովորաբար մենք նկատում ենք քաղաքի ազդա-
բնակչության և միևնույն ժամանակ արդյունաբերութեան
մեջ զբաղվածների տոկոսի աճումը, և հակառակը՝
գյուղատնտեսության բնագավառում իջեցում : Այս-
տեղ մենք հանդում ենք Հնդկաստանի ժողովրդական
տնտեսության ամենակարևոր հարցին :

Սույն յերկուսից փայլուն կերպով բնորոշում է
Հնդկաստանի վիճակը, նրա դրությունը բրիտանա-
կան իմպերիայի մեջ, նույնպես և անգլիացիների ավա-
զակային քաղաքականությունը :

Անհրաժեշտ է համառոտ կերպով կանգ առնել ան-
գլիացիների կողմից Հնդկաստանի զբաղման պատմու-
թյան վրա :

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Անգլիացիների կողմից Հնդկաստանի զբաղումը
սկսվում է 1757 թվից և վերջանում 1850 թ. : Մինչ այդ
Հնդկաստանում՝ բենգալիա քաղաքում աշխատում էր
Ոստ-Հնդկական ընկերությունը : Ոստ-Հնդկական ըն-
կերությունը առաջ է լեկել 1800 թվին կոնգեսում :

1773 թվին ընկերությունը յինթակտ դարձրին անգլիա-
ծան պարլամենտին : Հենց այդ ժամանակից, անգլիա-
կան ղեկերալ նահանգապետը հանդիսանում էր Հնդկաս-
տանում վորպես անգլիական թագավոր : 1784 թվին
կազմակերպվեց վերահսկիչ խորհուրդ, վորի վարչա-
պետը նշանակվեց նախարարների խորհրդի անդամ,
այժմս Լոնդոնի հնդկական գործերի պետական քարտու-
ղարը : Հնդկական խորհրդի հետ միաժամանակ, հընդ-
կական ղեկավարտամենտում նա հանդիսանում է բար-
ձրագույն վարչական մարմին : Նրա իրավունքները վո-
րոշվել են 1919 թվի սահմանադրությամբ : Վերահս-
կիչ խորհուրդ կազմակերպվելով, ընկերության իրա-
վունքները բավականաչափ զգալիորեն սահմանափակ-
վեցին : 1813 թվին ընկերությունից խլվեց առևտրա-
կան մենաշնորհը : 1858 թվին Անգլիան սկսեց կառավա-
րել Հնդկաստանը, վորպես պետութեան գաղութի :

Այսպիսով, սկզբներում այս ընկերությունը ամե-
նագործեղն էր : Հնդկաստանի զբաղման առաջին տարի-
ները նա ամենալայն առևտուրն էր անում Հնդկական
ապրանքներով : Նա Հնդկաստանից յեվրոպական յեր-
կրներն էր արտահանում բամբակի ապրանքները և
մանվածքը : Սակայն, այս ընկերությունը, վոր դեռ 17-
րդ դարից իր ձեռքին էր պահում Հնդկաստանի հետ ու-
նեցած ծովային առևտուրը, չէր հանդիսանում անմի-
ջականորեն վորպես իշխանութեան մարմին : Դրություն-
ը փոխվեց, յերբ 1757 թվին անգլիացիները իրենց ձեռ-
քը զցեցին բենգալիայի քաղաքացիական ղեկավարու-
թյունը : Այդ ժամանակաշրջանից Հնդկաստանի հարթ-
առությունները հորդաուտ սկսեցին հոսել դեպի Անգ-
լիա : Առաջին 16 տարիների ընթացքում, այդ գավառ-
ներից 150 միլիոն Քուսնա քաղաքից արժապետությամբ

Թանգարթեք իրեր դուրս բերվեցին Կ)։ Այդ թաւանք նպատակն անդլիական արդյունաբերութեան արագ զարգացմանը։ Իրոք, այս տարիներն էլին, վոր հանդիսացան Անդլիայի արդյունաբերական հեղաշրջման աարիները։

Ակովեց Բենդալիայի կապիտալի տեղադրութեանը։ Ոստ-Հնդկական ընկերութեանը բոլոր միջոցներով քամում է դրամներն ու հարստութեանները այդ գաղափարից։ Չնայած առաջացած սովին, կառավարութեանը համարյա թե անընդհատ բարձրացնում էր հողային տուրքը, վորը գանձվում էր անասելի անխիղճ միջոցներով։ Անդլիական քաղաքականութեան ամենահիմնական կողմնացիներ, վոր նա սխտեմատիկորեն քայքայում էր հնդկական արդյունաբերութեանը։ Դեռ 18-րդ դարի առաջին կիսից, բոլոր յեվրոպական շուկաները մատակարարվում էին հնդկական դործվածքներով։ Մնդլիացիների կողմից Բենդալիան գրավվելուց հետո, գրութեանը շատ սուր կերպով փոխվեց։ 1794 թվից Հնդկաստանը սկսեց կանկալիցի մեծ քանակութեամբ դործվածքներ ներմուծել և արտահանել հումութ։ Հնդկական արդյունաբերութեանը բնականորեն սկսում է ընկնել։

ՍՆԳԼԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անդլիայի տնտեսական քաղաքականութեանը—Հնդկաստանում մոտավորապես մինչև համաշխարհային պատերազմը—ընդհանուր գծերով, բնորոշվում էր նրանով, վոր անդլիացիները դործադրում էին ամեն մի միջոց, վորպեսզի թույլ չտան անդակական արդյունաբերա-

թեան դործադրմանը։ Ահա թե ինչպէս և նկարագրում Մարքսը անդլիական քաղաքականութեան շնորհիվ Հնդկաստանում առաջ յեկած փոփոխութեանները։ «Հնդկաստանը, վորը դեռ ամենահին ժամանակներից սկսած հանդիսացել էր բամբակային դործվածքների ամենախոշորագույն արհեստանոցը, վորոնցով նա մատակարարում էր ամբողջ աշխարհին, այժմ սկսեց հեղեղվել անդլիական կտավով և բամբակե սպրանքներով։ Յերբ տրդեն իր սեփական դործվածքները դուրս չարտվեցին անդլիական շուկայի շրջանառութեանից, իսկ յեթե թողնու մէջին շրջանառութեան այն էլ ամենամանր պայմաններով, սկսեցին ներմուծվել հսկայական քանակով անդլիական սպրանքներ ամենափոքր և միայն նոմինալ հարկով, վորը կործանեց տեղական, մի ժամանակ ամենահայտնի բամբակադործական արդյունաբերութեանը»։ Առևտրական քաղաքականութեան հետազնդած նպատակն էր վորքան հնարավոր է ավելի լավ պաշտպանել անդլիական Փարբիկանտների և վաճառականների շահերը։ Իսկ յեթե սահմանվում էին զանազան հարկեր, դրանք լինում էին բացառապես չնչին (սպրանքի գնի 5 տոկոսից վոչ ավելի), նրանք ունեյին հատուկ նպատակադրում— պետութեանը յեկամուտ տալ։ Իսկ Հնդկական արդյունաբերութեան շահերը ի նկատի չէր առնվում։ Վորոչ չափով փոխվեց դրութեանը համաշխարհային պատերազմի ժամանակ։ Անդլիան ստիպված էր ուշադրութեան դարձնել Հնդկաստանում ծանր և թեթեւ արդյունաբերութեան առանձին բնազավանների դարդացմանը։ Բացի այն, վոր Հնդկաստանը համարյա կտրված է Անդլիայից, անդլիական գործածանքն էլ պատերազմում էին Միջագետքում, և Հնդկաստանն էր, վոր հանդիսանում էր հիշյալ դրամատերին սպասարկող մի ընդհանր

*) Ինչպէս որոյց և տալիս Բրուկսը

Սկսած 1924 թվից, Հնդկաստանը իրեն արդյունաբերութեան շարքերից բղխող, առևտրական քաղաքականութիւն վարելու վորոշ հնարավորութիւններ և ստանում: Սակայն, Անգլիան մինչև այժմ էլ ողջովում և առավելութիւններով և արտոնութիւններով: Յետև Հնդկաստանը քիչ թե շատ կարողանում և պաշտպանվել անյայտի մրցակիցներից, ինչպիսին Ճապոնիան, և, ապա իրեն ամենագլխավոր մրցակից Անգլիայից նա անգոր և պաշտպանվել: Անգլիան մինչև որս էլ խեղդում և Հնդկական արդյունաբերութիւնը: Յեւ իրոք, այս փաստերն են արտահայտում վերելք բերված թվերը:

Պիտի նշել նաև մի հանգամանք, վորը մեծ ազդեցութիւն և ունեցել Հնդկաստանի վիճակի վրա: 17 և 18-րդ դարերի ընթացքում հնդկական ազնվականութիւնը քայքայվեց, հողերը սկսում էին անցնել վաճառականներին և վաչխառուներին: Բայց 19-րդ դարի վերջին, Անգլիան արագ փոխեց իր քաղաքականութիւնը և ամեն կերպ սկսեց պաշտպանել հնդկական ազնվականութիւնը: 19-րդ դարի վերջերս, վորպես Բենգալիայի ¹⁾ ղեկերալ նահանգապետը, սկսեց վերականգնել հողային ազնվականութիւնը: Մտցրվեց «պամինդարներին» ²⁾ սխտեմը, վորը իրավունք տվեց նոր առաջ յեկած կարվածատերերին՝ ձեռք բերել տիրապետելու մշտապես գյուղացիներին պատկանող անտառներն ու հողամասերը: Բարձրացվեցին հողային հարկերը: Մի խոսքով այս քաղաքականութիւնը հետապնդ

¹⁾ Բենգալիայի առաջին գեներալ-նահանգապետները՝ Լորդ Կլայվը (1773 թ.), Վեյլը (1767 թ.), Կարայն (1763 թ.), Գառաինգ (1772 թ.), Լորդ Կորնուոլիս (1780 թ.), Մաքքեյ Վելլեսլի (1798 թ.):


²⁾ Կարվածատերական հողատերութիւն սխտեմ

քում մի մի Երազտան, այն է՝ Հնդկաստանում առեղծել Անգլիայի համար ուժեղ հենարաններ՝ ի գիմաց խոշոր հողատեր կարվածատերերի: Նպատակին հասել էլին. այս դարը մինչև որս էլ հանգիստանում և Հնդկաստանում անդլիացիների ամենախոշոր պաշտպանը:

Միտժամանակ ուժեղացան անդլո-հնդկական կադրերը հենց իրեն, Հնդկաստանի մեջ: Յետև սկզբնական շրջանում անդլիական քաղաքականութեան կիրառողը հանդիսացել էր նախ և առաջ Կատ-Հնդկական ընկերութիւնը, ապա ժամանակի ընթացքում նմանները յեղել են ընկերութեան ծառայողներն ու միլիտարիստական շրջանները, վորոնք կազմակերպում էին Հնդկաստանի բաղձական ուժերը և աստիճանաբար ընդարձակում հնդկական զավառների դրավումը: Ընդամենը հարյուր տարվա ընթացքում հնդկական իմպերիայի դրավումը համարյա թե վերջացած էր:

Իմպերիալիստական ապարատի այս բոլոր շերտերը դատում էին Հնդկաստանում, կողոպտում հետամնաց հնդկական գյուղացուն և ուղարկում իրենց հավաքածները Անգլիա: Սրա հետ միատին աճում էին նաև այս շերտերի շահերը, այն է՝ վորպեսզի վորքան կարելի յե ավելի շատ և շատ տարածել անդլիական դրոշի իշխանութիւնը «հեքիաթային» Հնդկաստանի լայնածավալ սահմաններում: Վորքան խորանում էին անդլիացիները յերկրի խորքերը, վորքան լայնանում էր «հովանավոր վող» տերիտորիան, այնքան ավելի շատ էր «հեմարանի» կարիքը զրացվում: Անդլիացիները լավ էին հասկանում, վոր Հնդկաստանի կողոպտումն ամենախալուն էր կերպով կարող են ոգնել անդկական իշխաններն ու կարվածատերերը, վորոնք դարձնում շարունակ շահապարձել են այս քայնածավալ յերկրից: Երան ինչպիսի ստանում են:

822
222
1508



Ֆորձառու յնն այս գործում, և նրանց միջոցով ամենից
փեշտ կարելի յեր հաստատովել Հնդկաստանում :

Այս մի շարք տվյալներից կարելի յե պարզ հասկա-
նալ, թե ինչու՞մն և Հնդկական հարցի ղլխավոր նպա-
տակը: Անդլիայի տիրապետութեան հետեանքները Հնդ-
կաստանի վրա յեղավ այն, վոր այս լայնածավալ յեր-
կիրը զրկվեց իր անտեսութեանը զարդացնելու հնարա-
վորութեաններէ: Հետո այս տիրապետութեանը ամ-
բացրեց իշխանների և կալվածատերերի իշխանութեա-
նը, քայքայեց գյուղացութեանը և մասնեց նրանց սա-
կավահողութեան, աղքատութեան, հետամնացութեան
և սիտեմաափկորեն կրկնվող սովերի:

Հնդկական բուրժուազական, իր ամենազլխավոր
պահանջներից մեկում առաջադրում և «Սվարաջ»*), նա
պահանջում և, վոր Հնդկաստանին ինքնուրույն անա-
տրական-Ֆինանսական քաղաքականութեան տանելու
հնարավորութեան տրվի: Նա ի հարկե, ուղում և այս
«ինքնավարութեանը» ուղտադործել իր շահերի համար:
Իսկ ինչ վերաբերում և Անդլիայից անկախ լինելուն,
ապա այս խնդրում սվարաջականները (ինքնավարու-
թեան կողմնակիցները) վերջին տարիներն իրենց մի
շարք յեղույթներում, բավական վորոշակի արտա-
հայտվում եյին հոգուտ բրիտանական իմպերիայի հետ
կապ ունենալուն: Որինակ՝ ահա մի վորջրիկ մեջբերում
սվարաջիստների ղեկավարներից մեկի— «Իսաի ճառից»
«Յեա յենթադրում եմ, վոր հանուն Հնդկաստանի բա-
րեքի, հանուն բրիտանական իմպերիայի բարեքի, հա-
նուն վորջ աշխարհի բարորութեան, Հնդկաստանը պիտի
ձգտի ազատութեան՝ իմպերիայի սահմաններում, և այդ
զլխով ծառայի համամարդկային նպատակներին»:

*) Սվարաջ—ինքնավարութեան

՛ին տարիները շատ են արգել նման հայտարարութեան
ներ ազգային շարժումների ղեկավարների կողմից և
կապն անդլիական կապիտալի հետ և մի շարք այլ յե-
թադրութեաններ ստիպում են ազգային բուրժուա-
զիային յեյնել հոգուտ նրա համար, խնդրի հիմնական
յուժման—«Բրիտանական իմպերիայի սահմաններում»:
Ամենազլխավորը, նա շահարդոված և Անդլիայի պայտ
պանութեամբ վորջ այս շափով, վոր դա պետք և նրան
արտաքին թշնամուց պաշտպանվելու վորքան «ներքին»
թշնամուց՝ բանվորներից և գյուղացիներից պաշտպանե-
վելու համար: Չնայած նրան, վոր հիմա բուրժուա-
զիան կարծես թե պայքարում և անդլիացիների դեմ,
սակայն իրականում ամենից շատ վախենում և ներկա
իրավակարգի դեմ բանվորների և գյուղացինե-
րի դուրս գալուց: Ուստի նա ամեն կերպ քարոզում և,
վոր չի կարելի բռնի ուժի ղլմել, վոր իբր թե սուր
բարձրացնողը սրով ել կկործանվի:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Հնդկաստանի գյուղատնտեսութեանն իրենից Կեր-
կայացնում և մի խայտարղետ պատկեր: Ավելի պողա-
վեա հանդիսանում են հորդառատ անձրևային չրջան-
ները, ինչպես նաև այն չրջանները, վորակց կան պա-
շարտացրած հողեր: Այդպիսիները հանդիսանում են
արևելյան և ներքին Բենգալիան, Աստամը, Բիլման և
Արևմտյան Հատամի ու Արավյան ծովի միջև յեղած
մերձափնյա շերտը: Ամենաշատ հորդառատ անձրևայնե-
րն լինում այս չրջաններում: Պարարտացրած հողամա-
սերով ավելի կարեկոտ չրջանները դանդում են Պենջա-

յում, Միացյալ դաժաններում, Լուիզերաթում, Առաւ-
 ժում, Բիրմայում, Բենգալիայում և մի շարք այլ վայր-
 քերում: Այս շրջաններում յերեք քառորդը բրնձի ար-
 տեր են, յերեք հինգերորդը՝ ձիթապտղային սերմեր և
 համարյա մնացած բոլորը ջուխի արտեր: Անձրենների
 սակավութան շնորհիվ ավելի պակաս պտղաբեր են
 Հնդկաստանի արևմտյան և հյուսիս-արևմտյան մասե-
 րը, ուր դլխավորապես ցանում են ցորեն, սխես և
 բամբակ: Գյուղատնտեսության համար ավելի բարե-
 նպաստ պայմաններ են միջին Գանգի ամենաշատ մարդա-
 բնակ հովտում: Մեկ յոթերորդ մշակված տարածու-
 թյունից հնարավոր է լինում կրկնակի բերք հավաքել,
 իսկ Մադրասի մի քանի մասերում հավաքում են նույն-
 իսկ 3 անգամ ավելի:

1920—21 թ. թ. ցանքսի ամբողջ տարածությունը
 կազմում էր 197,5 միլիոն^{*)}: Հեռեկալ թվերը հանդիսա-
 նում են հողային տարածության ավելի կարևորադույն
 կուլտուրաների միջև դասավորման ցուցանիշները՝

	Մ կ բ
Բրինձ	78.120.000
Ցորեն	20.357.000
Գարի	6.268.000
Ջուզարա	22.690.000
Քարասերմիկ	16.240.000
Յեղիպտացորեն	6.205.000
Սխես	9.463.000
Այլ կանաչեղեններ և նուխտային բույսեր	27.533.000

^{*)} Ակրը—հավասար է 0,25 հեկտարի

Խանջարեղեն, միրգ և այլն	7.610.000
Շաքարեղեն	2.705.000
Սուրճ	95.000
Թեյ	660.000
Կտավատի սերմ	1.496.000
Քունջուտ	3.591.000
Ապկոյի խոտ և մանանեխ	2.979.000
Հնդկակուղենի	626.000
Տիղկանեխայտ	565.000
Այլ ձիթապտղային սերմեր	986.000
Բամբակենի	14.114.000
Ջութ	2.472.000
Այլ մաղակերպ բույսեր	728.000
Ուլիում	123.000
Ծխոխոտ	932.000
Կերի բույսեր (խոտ)	8.108.000

Այնպիսի դավառներում, ինչպես Բենգալիա, Բի-
 դար, Ուրիսա և Բիրմանեն են, բրինձը հանդիսանում է
 նրանց դլխավոր հացային բուսեղենը: Զգալի գումար-
 ների բրինձ և արտահանվում Հնդկաստանից: 1921—22
 թ. թ. արտահանված բրնձի արժեքը կազմում է հա-
 մարյա 250 միլիոն ուղայի^{*)}: Յորենի բնագավառում
 Ամերիկայից և Ռուսաստանից— ցորեն արտադրող այս
 դլխավոր յերկրներից հետո, 1914 թվին Հնդկաստանը
 գրավում էր 3-րդ տեղը: Յորենի արտահանումը Հրնդ-
 կաստանում մեծ տեղ չի գրավում:

Հնդկաստանի թողովրդական տնտեսության մեջ,
 մեծ տեղ և գրավում ջութը:^{**)} Բավական է նշել այն.

^{*)} Ուղային—հավասար է 06 կապիկի

^{**)} Ջութը — բույս է, յուրից պատրաստված է կուլիտ
 դարձված:

Վեր 1921—22 թ. թ. արտահանվել է 440 միլիոն ուս-
պիի ջուլի հումուլթ և գործվածքներ: Հնդկաստանի
գյուղատնտեսության բնադավառում ավելի կարելի
տեղ և գրավում բամբակը, վորը մշակվում է գլխավո-
րապես Բոմբեյում, Բերաում, Մադրասում, Պենջա-
բում և Միացյալ գավառներում: 1921 թ. բամբակի
հումուլթ արտահանվել է 53 միլիոն ուսպիի: Բամբա-
կի գլխավոր գնորդը հանդիսանում է Ճապոնիան: Շատ
կարելի տեղ և գրավում նաև ձիթապղպային արտա-
դրությունը: 1921 թ. աարեկան արտադրությունը զը-
նահատվել է 50 միլիոն ստերլինգ: (750 միլիոն ուս-
պիի):

ԻՆՉՈՒ ՅԵ ՀԵՏԱՄՆԱՑ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆ- ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հնդկաստանի գյուղատնտեսությունն իր տեխնի-
կայով չափազանց հետամնաց է: Այդ մասին բավակա-
նին բնորոշ խոսում են բերքաավության տվյալները:
Յարենի բնադավառում, Հնդկաստանը յուրաքանչյուր
հեկտարին տալիս է 8,1 կվինտալ*) բերք, (այն ժամա-
նակ յերբ Ճապոնիան տալիս է 13,5 կվինտալ), բրնձի
բերքը— 16,5 կվինտալ: Ել ավելի դարձանալի յեն բամ-
բակամշակման վերաբերյալ տվյալները: Միջին բերքը
մի ակրին, Հնդկաստանում հարցում է 83 Փունտ, այն-
ինչ Միացյալ Նահանգներում 233 Փունտ, իսկ Յեզրա-
տասում— 340 Փունտ: Միախտի բերքը Հնդկաստա-
նում մի ակրին ընկնում է 800 Փունտ, իսկ Ֆրանսիա-
յում— 1380 Փունտ:

*) Կվինտալը հավասար է 100 կիլոգրամի: Անգլ. կվինտալը
հավասար է 160 կամ 112 Փնտի:

Այսպիսով, մենք տեսնում ենք, Վեր Հնդկաստա-
նում գյուղատնտեսական աշխատանքը չափազանց ցածր
արտադրողականություն ունի: Այնինչ, հողն այդ յերկ-
րում վոչ մի դեպքում վորակով վատ չէ, քան Ճապո-
նիայում: Վոմանք մինչեվ իսկ գտնում են, վոր նա լավ
է և պտղավետ: Պատճառներն այտեղ, դասակարգա-
յին հարաբերություններն են, վորոնց մասին մենք ա-
վելի մանրամասն կանգ կառնենք ներքևում:

Նախ և առաջ պիտի նշել այն հանգամանքը, վոր
գյուղատնտեսական տեխնիկան այս յերկրում զանվում
է անչարժ, լճացած վիճակում: Ինչպես հարյուր տարի-
ներ առաջ, այնպես էլ այժմ, հնդկական գյուղացու
աղքատիկ տնտեսությունը մշակվում է մի դույզ յեզնե-
րի, վայտի գութանի և ցաքանի միջոցով:

Չնայած անասնաբուժության առանձնապես կարևոր
նշանակությանը, նման պայմաններում մենք Հնդկաս-
տանում նկատում ենք անասունների պակասցում: Աշ-
խատունակ և կաթնատու նրանց հետ և ձագերի, անա-
սունների թիվը 1914—15 թ. թ. կաղմում էր 147 մի-
լիոն 239.000 գլուխ, իսկ 1921—22 թ. թ. — 145 մի-
լիոն գլուխ: Անասնաբուժության մեջ աճման կասեցում
նկատվում էր նաև մինչպատերազմյան շրջանում: Դա
բացատրվում է սխտեմատիկորեն կրկնվող սովերով:
1897 թ. սոլին Բոմբեյում վոչնչացավ մեկ միլիոն գլու-
խ, 1900 թ. կոտորվեցին 1 և կես միլիոնից ավելի,
իսկ 1918 թ. 1 միլիոն գլուխ:

Անասնաբուժության նման դրության գլխավոր
պատճառը պիտի համարել Հնդկաստանի հողային կա-
սուցվածքը, վորը պահվում է անդլիական կրոնիկա-
տարների, նաև տեղական իշխանների և աղքատյին ցուր-

Ժուտոգրիայի կողմից: Անասնաբուծութեան զարգացման համար անհրաժեշտ են բավականին զաշտեր և արոտատեղեր: Այնինչ, Հնդկաստանում անդլիական կառավարութեան, կալվածատերերի և վաշխառուների միահամուռ աշխատանքով արտերն ու արոտատեղերը բոլորովին չքացան:

Նկատի ունենալով հողի մեծ պահանջը և հողային բարձր դնները, կալվածատերերը, կառավարութեան հետ միասին սեփականացնում էին անմշակ տարածութիւններն ու արոտավայրերը և այլ հողամասերը, և ապա կապալով տալիս հողի կարիք զբացող գյուղացիութեանը:

Ահա թե ինչպես է նկարագրում անասնաբուծութեան դրութիւնը, Հնդկաստանի հայտնի պատմաբան Գենտերը՝ «Հնդկական իմպերիայի բավականին նշանակալից մասերում, անասունների խոշոր մասը յուրաքանչյուր տարվա մեջ 6 շաբաթ սովի յե մատնվում: Այդ ժամանակաշրջանում տաք, այրող քամիներ են առաջանում, յուրաքանչյուր կանաչ անհետանում է, իսկ վոչ մի կերի պատրաստի պաշար յերաշտին հակադրելու չի նախատեսվում: Միակ բանը, վոր կարող է անել տերը, գա, մի կերպ իրենց դժբախտ անասունների դրութիւնը արհաւիրելն է՝ կտրտված ճղներով, ջրերով, խոտի արմատներով, վորը ձեռք եր բերվում զանազան վայրերում: Լավ տարիները նրան հոջողվում է կերակրել իրեն անասուններին, իսկ վատ տարիներն ավելի շատ թե ջիչ թույլ է կղեմալյարները կոտորվում են սովից: Միլիոնավոր անասուններ վոչնչանում են

այս կամ այն կարողութիւնները»), վորոնց հիմնական պատճառը հանդիսանում է սննդի պակասութիւնը:

Սրան պիտի ավելացնել նաև այն, վոր գյուղացիների հողամասերի շնչին տարածութեան շնորհիվ, անասնապահութեամբ զբաղվելը չափազանց անտեղի է անողուտ է լինում: 40 ակրանոց հողամասում, յեղներ անողուտ է լինում: 5 ասուլիսի, պահելու տարեկան ծախսը հավասարվում է 5 ասուլիսի, իսկ փոքր հողամասերում այդ ծախսն ավելանում է 8—10 անգամ, վորը և հանդիսանում է գյուղացիների մեծամասնութեան համար, ուժերից վեր բեռ: Սույն դրութիւնից դուրս գալու միակ յեղը, —պահանջով տեղական վոչ ուժեղ անասուններով, նրանց կիսաքաղց դրութեան մեջ պահել, և բանխորական սեղոնը ավարտելուց անմիջապես վաճառել: Պարզ և հասկանալի յե, վոր այս դեպքում գյուղացին վնասվում է ինչպես վաճառման, նույնպես և գնման դեպքում:

ՀՈՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Հնդկաստանի գյուղացիութիւնը կաղմում է համարյա ամբողջ ազգաբնակչութեան յերեք հինգերորդ մասը: Գյուղացիները բրիտանական Հնդկաստանում — անասնապահների և այգեպանների հետ միասին — կաղմում են 180 միլիոնից ավելի, իսկ յեթե ավելացնենք նաև բատրակներին, այն ժամանակ կկազմի միւնչև իսկ յերկու յերրորդը: Հետեվյալ աղյուսակը ցույց է տալիս գյուղական ազգաբնակչութեան ստորաբաժանումը՝ կալվածատերեր և գյուղական

բուրժուազիան	10.720.000
Հողագործ գյուղացիները	180.230.000

*) Եւրոպայի անասունների մահաբեր հիվանդութեան:

Պատրաստեցան բանձրները և
 րատարակները 87.920.000
 Ընդամենը՝ 228.970.000

Սրանք 1921 թ. տվյալներն են: Սրանցից յերևում
 են, վոր կալվածատերերը, կուլակների, կառավարիչնե-
 րի և նրանց հովանավորողների հետ միասին, կազմում
 են մոտ 4—5 տոկոսը, իսկ գյուղատնտեսական բանվոր-
 ները 16 տոկոսը մոտավորապես և մանր արտադրողնե-
 րը մոտ 80 տոկոսը: Նայենք թե ինչպես է հողի բաժա-
 նումը: 1921 թ. վիճակագրման համաձայն հողի միջին
 տիրապետումը գավառներում հետևյալ պատկերն ու-
 ներ՝

	Աղբերի չափը 100 հոգուն
Ասսամ	296
Բենգալիա	312
Բիխար և Ուրիսա	309
Կենտրոնական գավառները և Բերարը	848
Բոմբեյ	1215
Մադրաս	491
Հյուսիս-արևմտյան գավառները	1122
Պենջաբ	918
Միացյալ գավառները	251

Միջին թվով, Հնդկաստանում մեկ տնտեսությանն
 ընկնում է 5 ալրից պակաս:

Իսկ ահա թե ինչպես է գրությունը դանազան դա-
 վաններում կալվածատիրական տնտեսությունների վե-
 րաբերյալ: Միջին թվով, Ազրայում մեկ կալվածատի-
 րական տնտեսությանն ընկնում է 200 ալր, Բենգալիա-
 չում— 425, Ալմեր-Մարվառում— 3000, Մադրասում—
 16.000, Ուջայում— 65.000 ալր: Կան նաև առանձին

կալվածատերեր, վորոնք տեր են 500.000 ալրի (Նարբը-
 խանդի-Մազարաչան. նրա տարեկան մաքուր հասույ-
 թը հասնում է 15 միլիոն ուղլիի):

Յեթե վերցնենք վոչ առանձին-առանձին գավառնե-
 րը, այլ ամբողջ Հնդկաստանը, կատանանք այն, վոր
 կալվածատիրական սեփականության միջին չափը հաս-
 նում է 228 ալրի: Արդեն միայն այս ընդհանուր թվերը
 տալիս են դասակարգային հակասությունների պարզ
 պատկերը: Մի կողմից համարյա 200 միլիոն մարդիկ—
 չնչին աղքատիկ հողամասերով, մյուս կողմից՝ կալվա-
 ծատերերը, վորոնք կուլակների և նրանց տնայինների
 հետ կազմում են 5 տոկոսից պակաս և իրենց ձեռքե-
 րումն են կենտրոնացնում ամբողջ հողի համարյա կեսը:
 Այստեղից առաջ է դալիս գյուղացիական տնտեսու-
 թյունների հողամասերի մշտական կարտավածություն
 նրանց ավելի շատ ու շատ պակասեցումը, և մյուս կող-
 մից կալվածատիրական տնտեսությունների հողամասե-
 րի կապարով տալու սխտեմի ավելի ու ավելի ուժեղա-
 ցումը:

Հնդկաստանում գոյություն ունի հողատիրության
 յերկու ձևով: Նրանցից մեկը կոչվում է ուսյատվարի, և
 ընտրովում է նրանով, վոր հողը պատկանում է առան-
 ձին մանր սեփականատերերին, վորոնք մշակում են հո-
 դամասերն իրենց ընտանիքի անդամների ոգնությամբ,
 կամ տալիս են վորոշ մասը կապարով: Այս սխտեմը
 յայնորեն տարածված է կենտրոնական Հնդկաստանում,
 Բերարում, Մադրասում, Բոմբեյում և Բիրմայում:
 Հողատիրության յերկրորդ ձևվը կոչվում է դամինդա-
 րի, վորով դյուզի վոզլ գյուղատնտեսական տարածու-
 թյունը պատկանում է մի անձնավորության կամ մի

ընտանիքի: Յերբեմն օտ մի ընդհանուր հասարակութիւն է կազմում, վորը կապալով է տալիս իր հողը: Այդ կարվածատիրական դյուզերը իրենց ծագումով տարբերվում են: Վորոչ մասը, իրենցից ներկայացնում են իշխանական աների քայքայված մնացորդները: Հնդկական իշխանները, կամ ինչպես նրանց մինչև հիմա յիշ դեռ կոչում են— Բաջանները, աստիճանաբար կորցրել են իրենց իշխանութունը և դառել են սովորական կարվածատերեր: Բայց ավելի շատ կարվածատիրական դյուզեր առաջ յեկան կապալների հետ կապված տուրքերից*): Որինակ՝ Բենդալիայում— դամինդարը— դա հարկեր հավաքելու նախկին գործակալն է, կամ նման գործակալի ժառանգը, վորովհետև հարկերի կապալը Հնդկաստանում շատ դեպքերում անցնում է ժառանգաբար:

Անհրաժեշտ է այստեղ նշել նաև այն, վոր հողատիրութեան ձևերը Հնդկաստանում շատ խայտարակետ են և նրանք բոլորն այս կամ այն դեպքում կապված են հողային տուրքի հետ. այսինքն անդլիական իշխանութեանը: Յեթե որինակ՝ վերցնենք կարվածատիրական հողատիրութեանը— դամինդարին, կտեանենք, վոր նա իրենից հետևյալն է ներկայացնում: Այս կամ այն վայրում, կարվածատերը, իշխանութունների առաջ հանդիսանում է պատասխանատու այս կամ այն հողային տարածութունների, հողային տուրքերի համար: Նրա համար հարկի չափը միանգամայն ընդմիշտ վերջնական, (մշտական դամինդարներ) կամ 10—20 տարով

*) Կառավարութունը տուրքերի հավաքելու կապալով է տալիս մասնաժողովուրդի: Այդպիսի կապալի մինչև քոս ել գործութեան արեւ Հնդկաստանի տարածքին գաւառներում:

վորաշնչան է: Իսկ գամինդարը, գյուղացիներից հաճութեամբ է բավականին ավելի:

Հետաքրքիր է տեսնել թե ինչպես է դրութեանը Հնդկաստանի առանձին բնագավառներում: Բերված միջին տվյալները բավական չեն: Բոմբեյում մինչև 70 տակոս մշակվող հողային տարածութունները, գտնուվում են 100 ակրից ավելի տարածութուն տիրապետող կարվածատերերի ձեռքին: Մադրասում 27 միլիոն ակր գտնուվում է խոշոր կարվածատերերի ձեռքին և այնտեղ գոյութուն ունեն 15 խոշորագույն կարվածքներ 460000 ակր յուրաքանչյուրը, մեկը 116.000 ակր, 53 կարվածքներ—50—ական հազար ակր, 67 կարվածք—13—ական հազար և 678 կարվ. յուրաքանչյուրը 3700 ակր: Մադրասի մի շարք շրջաններում և Բոմբեյում գոյութուն ունեն միջնադարյան տիրապետութեան մնացորդներ, ուր կապալով վերցնողները, պարտավոր են վճարել կարվածատերերին նրա հարսանիքի, կամ յերեխա ծնվելու և այլ դեպքերում առանձին տուրքեր: Ավելին կարելի չէ ասել, յերբ լրանում է կապալի ժամկետը, այն ժամանակ կատարառույթի ամբողջ տունն իր կահարասիներով անցնում է կարվածատերերի սեփականութեան:

Պենջաբում 10 միլիոն ակրից ավելի մշակվում են կատարառուների կողմից: Բենդալիայում կարվածատեր— դամինդարները հողը տալիս են վոչ թե գյուղացիներին, այլ միջնորդներին, նրանք ել իրենց հերթին արել միջնորդներին: Մինչևիվ հողն ընկնում է գյուղացու ձեռքը, արդեն բարձրված է լինում այդ շահագործողների կողմից հսկայական տուրքերով: Վորովհետև Բենդալիան շատ պաղաքեք գաւառ է, դրա համար ել

այնտեղ, այդ պարագիծերը բեղմնավորվել են անա-
վել ևս չառ: Զրվող դաշտերում, պրոդուկցիայի յերեք
հինգերորդը կալվածատերերը վերցնում են իրենց, իսկ
ցամաք հովիտներից՝ կեսը: Կալվածատերերը իրավունք
ունեն դատապարտելու իրենց կապալառուներին, տու-
գանելու և բանտարկելու:

Առդա և Ազրարի Միացյալ դավառներում, կալվա-
ծատերերը մինչև վ որս կապալի սովորական վարձից
դատ դանձում են առանձին տուրքեր— նվերատվու-
թյուն, հարսանիքի կամ աղայի ծննդյան առթիվ— վոր-
պես սրբավայրերին հատկացված դումարներ: Մի խոս-
քով, դյուղացիներն այստեղ բառիս լայն իմաստով—
ստրուկների վիճակումն են գտնվում: Չանաղան տե-
ղեր, դյուղացիները պարտավոր են, վորոչ ժամանակ
աշխատել կալվածատիրոջ համար: Առդայի դավառնե-
րում 23 հազար դյուղ կա, նրանցից 13 հազարից ավելին
գտնվում և խոշոր կալվածատերերի ձեռքին: Բացի դը-
բանից, վորջ Հնդկաստանում դյուղթյուն ունի յեկեղե-
ցական սեփականություն, նույնը և քրմերի, մոլլաների
և սրբերի սեփականություն: Այս բոլոր հողերը գանը-
վում են որևերի առանձին հովանավորության ներքո,
և նույնիսկ կապալառուների այն վողորմելի իրավունք-
ները, վորոնք ընդունված են կալվածատիրական հողե-
րում, այստեղ ուժի մեջ չեն:

Գյուղացին վճարում է հարկը կամ հողային տուր-
քը, հետո բենտան*):

1793 թվին Բենդալիայի և Բիխարի բոլոր հողա-
մասերի հարկը— հավասարվում էր 30 միլիոն ուուպի-
յի, իսկ բենտան 135 միլիոն ոուուպի: Գյուղացիները

Բայտավարի չբժաններում, միջին թվով վճարում են ի-
րենց վողջ հավաքած պրոդուկցիայի 20 տոկոսը: Գիտի
ասել, վոր բենտան, շնորհիվ հողային սովի, աճում է:

Ահա թե ինչպես է բնորոշում դրությունը միացյալ
դավառների հողային դիրկտորը:

Վկայալառուների թեկնածուների թիվը հետզհետե
բարձրացավ և մրցումը հողի համար աճեց այնպես,
վոր միամամնակ կալվածատերին աղատեց չբժանա-
նության պահանջի կատեցնող աղղեցությունից: Այո-
պիսի պայմաններում— անխուսափելիորեն ստուգվեց
արդյունքը, վորը գիտում ենք մենք կյանքում՝ անընդ-
հատ բարձրացող կապալավարձը և հողը վերցնող անձ-
նավորության թողած չափը, վոր հաղիվ է բալարա-
րում իրեն և իր ընտանիքի անհրաժեշտ կարիքներին»:

Այսպիսի պայմաններում հասկանալի յե դառնում
հողի կտրտվածությունը, վորը տարեց տարի ավելի ու-
ժեղանում է Հնդկաստանում: Մենք արդեն վերևում
նշեցինք, վոր փոքր հողամասերը ձեռնառ չեն դարձ-
նում աշխատող անասուններ պահելուն, վոր փոքր հո-
ղամասի տերը, ստիպված է ողտվել ավելի թույլ ցեղի
անասուններից, նույնը և վաճառել անասունները աշ-
խատանքի չբժանը— սեղոնը վերջացնելուց հետո: Կտր-
տվածությունը, յերբեմն հասցնում է այն աստիճա-
նի, վոր դյուղացիական տնտեսությունն ավելի շատ է
խրվում աղքատության գիրիը: Աշխատանքի սեղոնք
վերջացնելուց հետո շուկայում վաճառվող անասուննե-
րի մշտական վնասը, յերբ չուկայում անասունների
մեծ առաջարկ կա, և աշխատանքի սեղոնի սկզբում
անասունները գնելը, յերբ չուկայում մեծ պահանջ է լի-
նում, դյուղացիներին հասցնում են այն վիճակին, վոր

*) Բենտան— ներկա զեպում կապալավորք է:

ձրանք միշտ պարտքի մեջ են ընկած: Պարտքի մեջ մնալը հանդիսանում է հնդկական գյուղացու ամենագլխավոր դժբախտությունը:

Վերջին ժամանակներս, թաղավորական հանձնաժողովը հետևյալ կերպ է նկարագրում Պենջաբի հազամասերի մանրացումը: Բոլոր տնտեսությունների 22 տոկոսը մշակում է 1 ակրից պակաս, 15 տոկոսից բարձրը— 1-ից մինչև 2 և կես ակր, 17 տոկոսը— 2,5 մինչև 5 ակր և միայն 20 տոկոսը— 5—10 ակր: Ճիշտ նույնպես է գրությունը նաև Մադրասում և Բոմբեյում: Ուժեղանում է նաև միջասահմանությունը: Լինում են զեպեր, յերբ աղքատիկ գյուղական տնտեսությունը ցիր ու ցան է արված 200 տարբեր մասերում: Հասկանալի չէ, վոր նման պայմաններում ավելորդ է լինում մտածել, մի կերպ լավացնելու մասին տնտեսության գրությունը:

Հնդկաստանում հողը կարիք է զգում արհեստական վոտոզման: Ներկայումս միայն ամբողջ հողի 19 տոկոսըն է վոտոզվում: Բայց վոտոզիչ կառուցումները (ինչպես— ջրանցքներ, ռեզերվուարներ, հորեր և այլն) շատ թանկ են նստում: Կառավարությունն այս գործում վատ չի աշխատում, վոտոզված հողամասերից ստացված յեկամուտը ետղմում է կառուցումների համար դրած կապիտալի միայն 20 տոկոսը:

Ձրհորի կառուցումը նստում է 14.000 ռուպիյ, և պարզ է, վոր միայն կալվածատերերն ու կուլակները կարող են թույլ տալ իրենց այդ շքեղությունը: Մանր և շատ ջնջին գյուղացիական տնտեսությունները ի վրձապի չեն սզտվելու վոտոզման անհրաժեշտ միջոցներից:

ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎՆՐԱՐԵՌՆԵՎԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Համարձակ կարելի չէ ասել, վոր ամենամեծ ծանրությունը, վոր Հնդկաստանի գյուղացիությունը տանում է իր ուսերի վրա, դա պարտքերի ծանրաբեռնվածությունն է: 1880 թվի սովը քննող հանձնաժողովը, այս հարցի շուրջը հետևյալն է արտահայտում՝ «ամբողջ Հնդկաստանում հավաքած տվյալների հիման վրա, կարելի չէ ասել, վոր հողագործների մեկ յերրորդ մասը դքնվում է ծայր աստիճան խորը և անկասելի պարտքերի մեջ, նրանցից մի քիչ ավելի պակաս պարտքերով ծանրաբեռնված են նաև, նույն թվով այլ հողագործներ»:

1901 թվի սովը հետազոտող հանձնաժողովի հազմեալություն մեջ նշվում է՝ «Իր յելույթում, Բոմբեյի կառավարության գլխավոր քարտուղարը հայտնեց, վոր Բրոաջում ամբողջ հողի 28 տոկոսը անցավ վաշխառուների ձեռքը: Ախմեդաբաթի ներկայացուցչի հայտարարությունից յերևում է, վոր հին սեփականատերերի եքսպրոպրիացիան») զգալի կերպով ուժեղացել է»: Նկատի ունենալով այս բոլոր հայտարարությունները, հանձնաժողովը յեկավ յեղրակացություն, վոր առնվաղն Բոմբեյի վարչապետությունից գյուղացիների չորրորդ մասը կորցրել են իրենց հողերը, վոր մեկ հինգերորդականից պակաս մասը աղատ են պարտքերից, իսկ բոլոր մնացածները քիչ թե շատ չափով ծանրաբեռնված են պարտքերով:

Համաձայն 1906 թվի տվյալների, գյուղական վաշխառուները տարբեր շրջաններում գյուղացիներից դան-

*) Երազրույթիցիւթա—բանի հեապում
5141—2

ձում ելին հետեւյալ տոհմները՝ Մարգարեան 12—14 տոհոս, Մայսորում 12 տոհոս, Բոմբեյում 12—15 տոհոս, կենտրոնական գավառներում— 18—25 տոհոս, Բենդալյայում 18—25 տոհոս, Արևելյան Բենդալյայում 18—24 տոհոս, Պենջաբում 24 տոհոս, Ասամում 37 տոհոս:

Այս քիչ թե շատ պաշտոնական տվյալները, դեռ այն ժամանակ ել հեռու ելին իրականությունից: Գաղկալի շրջանում առանձնակի դեպքերում տոհոսը հասնում էր 150-ի, իսկ միջին թվով—75-ի:

Անդրիական կառավարությունը, գյուղացիական յեյութների ճնշման տակ, քանիցս որևնքներ է հրատարակել, վորոնք իբր թե պիտի սրայքարեյին վաշխառությունների դեմ: Իսկ իրականում, վաշխառուները շատ հանդիստ վիճակում շարունակում ելին կողոպտել և ծծել գյուղից— վերջին հյուսիսը:

1911 թվին, Հնդկաստանի կոոպերատիվ շարժման հիմնադիրը հետեւյալ կերպ է նկարագրում գյուղի վիճակը՝ «լպիրը, կեղեքիչ, անդուր վաշխառությունը ծրծում է վողջ հյուսիսը հնդկական հողագործներից և մասնում է նրանց ստրկական վիճակի: Վաշխառություն շնորհիվ տնտեսությունը քիչ թե շատ բարվոք վիճակի մեջ դնելը դառնում է անհնարին, հողադործի թե կամքը և թե յեռանդը բոլորովին ջլատվում է: Մարդիկ հետզհետե ինչում են և ընկնում հավատարիմ ճակատագրի գիրկը, այլևս վոչ մի բանի հույս չունենալով: Նրանց կյանքը քաշ է դալիս տխուր և աննպատակ, զրկված լինելով վորեւ նպատակադրումից»:

Անհրաժեշտ է նշել, վոր հնդկական գյուղացիության պարտքերի ծանրաբեռնվածությունը, ուժեղ կերպ

զով տարբերված և կտարժանալիանորեն պարզացանք յերկրի գյուղացիության պարտավիճակից: Հատ էյուսթյան, վաշխառությունը Հնդկաստանում հանդիսանում է ստրկության վորոչ ձեւերից մեկը: Ահա մի քանի որինակներ, վորոնք ցույց են տալիս, թե իրենից ինչ է ներկայացնում «պարտքը» Հնդկաստանում:

Չտաճաղապուրի նահանգում գոյություն ունի «Կամինաի» սիստեմը: «Կամիա»—դա գյուղացի պարտատերն է, վորը պարտավոր է պարտատիրոջ պահանջով, վարձով կատարել ամեն մի աշխատանք, վորի աշխատավարձը հաղիվ կաղմում է գյուղատնտեսական բանվորի աշխատավարձի 50 տոկոսը: «Կամիան» իրավունք չունի իր բնակավայրը փոխելու առանց պարտատիրոջ թույլտվության: Վորդին «ժառանգաբար» պարտավոր է նույնպես կատարել պարտատիրոջ կողմից պահանջված բոլոր աշխատանքները: Մարգարեան, նույնպես գոյություն ունի ճորտական հպատակության սիստեմ, վորն առաջ է յեկել պարտքերը չվճարելուց, և հպատակությունն անցնում է «ժառանգաբար»: Հողը վաճառելու դեպքում, պարտատեր ճորտերը անցնում են նոր սեփականատիրոջը:

Հուջիրաթում նկատվում է պարտքերի հետեյալ ձեւը, չքավորը ամուսնանալու դեպքում, վաշխառույից կամ կուրակից ստանում է քիչ թե շատ խոշոր դուրմար դրամ, վորի փոխարեն, պարտավորվում է իր վողջ դերդաստանով ու ցեղով ծառայել պարտատիրոջը: Ստրկությունից տղատվելու միակ ձեւը, դա փախուստն է, բայց սա ել այնքան հեշտ չեր լինում, վորովհետեւ է, բայց սա ել այնքան հեշտ չեր լինում, վորովհետեւ լայնատարած նահանգի վաշխառուներն իրար մեջ համաձայնություն են դալիս փախուսականներին բռնել և իրենց անդերն ուղարկել:

Հետագայում րազմ յան տարիները այս բնագավառում
վոչ մի դրական փոփոխություն չմտցրին: Հնդկաստանի
1929 թվի պաշտոնական տարեցույցը հետևյալ
կերպ է նկարագրում հիշյալ դրությունը:

«Ձգալորության, անդրադիտության և գործերի
մեջ անհեռատեսության շնորհիվ, գյուղացին իրեն հո-
ղամասը լավացնելու, կամ կրոնական ծիսակատարու-
թյունների համար կատարած սեղոնային ծախսերի պատ-
ճառով ընկնում և պարտքերի մեջ. նա ստիպված և լի-
նում դիմել տեղական վաչխառույի ողնությանը, վորը
կոչվում է «սառկար» կամ «մաղաջան»: Նման պարտ-
քերի տոկոսը, չնայած, առանձին գավառներում և նույն
խիւ միևնույն գավառի գանաղան մասերում տարբեր
լինելուն, ընդհանուր առմամբ շատ բարձր է: Բավա-
կան չե բարձր տոկոսը, վաչխառուն կորղում և փողը
դանաղան պատճառարանություններով և հաճախ, կա-
րիքավոր գյուղացուց վերցնում և պարապփորություն
այնպիսի գումարների, վորոնք ավելի յեն քան սրա
վերցրածը»: Ինչպես տեսնում ենք, գյուղացիների դը-
րությունը մինչև որս ել չափազանց ծանր է: Պարտքը—
դա հնդկական գյուղի, բառիս լայն իմաստով, ծորտաց-
ման միջոցն է:

ՀՆԻԿԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԹՇՎԱՌ ՎԻՃԱԿԸ

Մի ժամանակ Հնդկաստանը յեղել է հարուստ յեր-
կիր: Հնդկաստանի հարստությունն է, վոր դրավել է
յեվրոպացիներին: Ճիշտ է, գյուղացիությունը անցյալ
դարերումն ել յերջանկության ու յերանության մեջ չի
գտնվել: Սակայն այսպես թե այնպես, հնդկական գյու-
ղի ներկա աղքատությունը, մինչև իսկ գերազանցում է

այն Բրիտանությանը, վորը յեղել է սրանից 200 ասորի
ասալ:

Աղագրնակության յուրաքանչյուր անձի, տարվա
միջին յեկամուտը կազմում է 38 ուսպիյ կամ 25 ուս-
լի: (1914—22 թ. թ. ավյալները): Յեթե ընդունենք
այն, վոր յուրաքանչյուրի գլխահարկը տարեկան 12
ուսպիյ է կազմում, կստանանք 26 ուսպիյ: Շատ պարզ
է, վոր այս յեկամուտը չի բավականացնում նույնիսկ
առաջին անհրաժեշտություն կազմող կարիքներին:

Ի հարկէ, բոլոր գյուղացիները չեն, վոր տարեկան
ստանում են 26 ուսպիյ յեկամուտ: Գյուղացիների մեջ
կան ուռճացածներ, կուրակներ, վորոնք ավելի յեն վա-
տակում: Բամբակացան այն շրջաններում, ուր հողը
արհեստականորեն ջրանցքներով է վորոզվում, գյու-
ղացիների առանձին շերտերի դրությունն ավելի լավ է:
Սակայն, այս բոլորը մի կաթիլ է աղքատության ու-
չարիքների այդ անհուն ծովի մեջ:

Գյուղերի աղագրնակությունը աճում է, հողամա-
սերը մանրանում, իսկ հողի «փորակը» անընդհատ վա-
տանում է: Սա խոտտովանում են ներկա Հնդկաստանի
իմպերիալիստական տերերն անդամ: Բերքատփություն-
ը պակասում է: Բրնձի միջին բերքը մեկ ակրից— 1090
թվին կազմում եր 1140 ֆունտ, իսկ 1923 թվին— 810
ֆունտ: Գյուղացիության թշվառությունների պատ-
ճառները առաջին հայացքից թվում են մեծ, բայց յերբ
ավելի մտոից ես նայում և խորանում, այն ժամանակ
բոլորը հանդում են անդլիական կապիտալի իմպերիա-
լիստական հարստահարմանը, նույնը և հնդկական կա-
վածատերերի և կապիտալիստների անասելի անդու-
թ չահագործմանը:

Առանձնապես ծանր վիճակ է ապրում գյուղատնտե-

անկան բանվորութեանը, վորոնց թիվը Հնդկաստանում հասնում է 37 միլիոնից ավելի: Գյուղատնտեսական պրոլետարիատը կազմված է բատրակներից, անային ծառաներից, անորոշ աշխատանքի տեր անձնավորութեաններից և գյուղատնտեսական բանվորներից: Ընդհանրապես գյուղատնտեսական պրոլետարի միջին յեկամուտը տարեկան հասնում է 10 ռուպլի: Վեց միլիոնից ավելի բատրակներ կան, վորոնք ատանձնապես դանվում են այն շրջաններում, ուր վտոռիչ կառուցումներ են լինում: Այնտեղ խոշոր տնտեսութեանների թիվն ավելի զերակշռող է, և վարձու աշխատանքի պահանջն ավելի շատ: Իրանը ավելի շատ Պենջարումն են և Բոմբեյի*) ու Բերառի բամբակաջան շրջաններում:

Բատրակները վոչ միայն դանվում են մուրացիկների վիճակում, սնվում բանտարկյալներից ել ավելի վատ, այլ նրանք փակված ու խավար կյանք են վարում. միշտ ահ ու սարսափի մեջ են թե՛ չզրկվին հանկարծ այն վողորմելի ու չնչին աշխատանքից, վոր նրանք ունեն: Սուլի սարսափը նրանց դարձնում է անտրտունջ ըստրուկներ:

Հաշորդը գալիս է գյուղատնտեսական պրոլետարիատը, բառի բուն իմաստով: Նրանց թիվը 32 միլիոն է: Նրանք իրենցից ներկայացնում են նախկին գյուղացիների այն խավը, վորոնց կալվածատերերն ու վաշխառուները հողադուրի են դարձրել, խլելով նրանց հողերը: Սրանք ավելի շատ սեղոնային բանվորութեան են անում. ընդամենը տարվա մեջ աշխատում են մի քանի ամիս, իսկ մնացած ժամանակը թափառում՝ աշխա-

տանք ճարելու: Կտուսվարական հանձնաժողովներն անգամ իսկ, ստիպված են խոստովանել, վոր սա չանձր տորեն կործանվող մարդկային ուժ է: Սա այն հսկաստան մասսան է, վոր իրեն համար գյուղում աշխատանք չի կարողանում ճարել, իսկ Հնդկաստանի քաղաքները Հնարավորութեան չեն ունենում ընդունել դործադուրկների այս հսկայական բանակը: Վորքան վոր արագ են պակասում գյուղացիական տնտեսութեան ների տարածութեանները, այնքան ավելի վատթար պրութեան է ստրում գյուղատնտեսական պրոլետարիատը: Միևնույն ժամանակ խոշոր տնտեսութեանները սկսում են գյուղատնտեսական մեքենաներ դործածել, վորը և նվաղեցնում է բանվորական ուժի պահանջը: Աշխատավարձը Հնդկաստանում ընդհանրապես աննշան է, իսկ վերջին ժամանակներս նա առավել ևս չնչին է դառել թամիլների պատճառով: Այս անսահման կարիքը գյուղատնտեսական պրոլետարիատին ստիպում է հող ձեռք քցել. թեկուզ ինչպիսի դեով ել լննի— գնել գոնե մի փոքրիկ հողամաս: Բայց հող ձեռք բերելու կատաղի ցանկութեանը բարձրացնում է հողի գինը և գյուղացիութեանը մատնում կալվածատերերի և վաշխառուների կամքին: Ստացվում է կախարդված շրջանակ:

Գյուղացիների յեկամուտների մասին վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, վոր նրանց սնունդը շատ վատ է: Մի քիչ բրինձ, աղ, մի փոքր ձկնեղեն, բանջարեղեն— ահա ամբողջը: Շատ անբարենպաստ են ջրի պայմանները: Ջրհորները, ջրամբարներն ու առուներն ոգտագործվում են ինչպես տան կարիքների, նույնպես և դաշտերը ջրելու համար: Բայց ջրամբարներն ու առուներն այնքան ել պիտանի չեն խմելու համար, վոր-

*) Բոմբեյը— նախանգլիսա և՛ բանգալի արգյուտները: Թյան խոշորագույն կենտրոն:

բողճեան աշխատող չորսնեւմ են: Մակայն ստորին կտաս-
տանները, այսինքն գյուղի ամենաաղքատ շերտերը, բա-
տիպված են խմել ջուրը: Ամառվա շուկերին, ջրամբար-
ներն ու առուները ցամաքում են: Իսկ ջրհորների մեծ
մասը ուղաղործվում է միայն բարձր կաստանների կող-
մից: Իրենց համար ջրհորներ փորելու, գյուղի ստորին
խավը հնարավորութուն չի ունենում. դա շատ թանգ
է նստում նրանց: Արդյունքները լինում են այն, վոր
չող ժամանակները չքավորները ստիպված են լինում
ջուր կրելու բավականին հեռու տարածութունից լճա-
ցած ավազաններից:

Ուրեմն հասկանալի չէ, թե ինչու հնդկական գյու-
ղում հիվանդութունները հսկայական դոզեր են տա-
նում: Սուլերան, ծաղիկը, ջերմախտը, մալարեյան,
թոքախտը, հոդացավը յուրաքանչյուր տարի միլիոնա-
վոր մարդկային կյանքեր են խլում: Բժշկական ոգնու-
թյունը գյուղին անմատչելի չէ: Բժիշկները թիվը քիչ
է, և նրանք շատ պարզ պատճառներից դրդված դերա-
դասում են այրել քաղաքներում, ուր նրանք ավելի
շատ վաստակ կարող են ունենալ: Գյուղացիները ող-
տվում են համարյա թե բացառապես «իրենց բժիշկնե-
րից» այսինքն հեքիմներից, վորոնցով խժվժում են
հնդկական գյուղերը:

Սուանձնապես ծանր է առողջապահական վիճակը:
Սա ստիպված է խոստովանել անգամ կառավարական
հանձնաժողովը իր 1928 թվի հաշվետվության մեջ՝
«Յուրաքանչյուր տարի, խոստովանում է կառավարա-
կան հանձնաժողովը—միջին թվով Հնդկաստանում հա-
մաճարակից մահանում են 5-6 միլիոն մարդ, վորոնց
մահացութունը կարելի չէր կանխել: Միջին հաշվով
ամեն մի հնդիկ այդ համաճարակներից հիվանդանում

և 3 չափաթ է յուրաքանչյուր բնակիչ կորցնում է իր
աշխատունակության —միջին թվով 20 տակոսը հիվան-
դություններ և քաղցածության շնորհիվ: Միայն յե-
դությունների 50 տակոսն է, վոր այրում է մինչ 16 տա-
րեկան հասակը: Հնդկական գյուղի մեծ մասը զուրկ են
անգամ մաքուր առողջապահական ջրից: 1923 թ. ջեր-
մախտից մահացել են 3,750,000 հոգի, 8 միլիոնը մըլ-
տադես հիվանդանում են մալարեյայով: Ժողովրդի
սնունդը չի համապատասխանում անգամ մարդկային
որդանիքի ամենատարրական պահանջներին»:

Այս բոլորը դրում են Հնդկաստանի տերերը, նը-
րանք, վորոնք հսկայական յերկիրը հասցրին աղքա-
տության և մարելու աստիճանին: Պարզ է, ուրեմն,
վոր վոչ մի կերպ չի կարելի բացասել:
վոր մոչ մի կերպ չի կարելի բացասել:

ՀԵՂԱՓՈՆԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ

Հնդկաստանի դրության մասին վերոհիշյալ ասած-
ներից հասկանալի չէ դառնում արդեն հեղափոխական
չարժման անխուսափելիութունն այս խոշոր գաղու-
թային յերկրում: Մենք տեսանք, վոր գոյություն ունեն
այնպիսի մոմենտներ, վորոնք բուրժուազիային մղում
են պայքարի ճանապարհը՝ հանդեպ անդլիական իմ-
պերիալիստների: Անդլիան խանգարում է հնդկական
արդյունարերության պարզացմանը. անդլիական աղ-
բանքները լեցվում են հնդկական շուկաները և դուրս են
չղրտում Հնդկաստանում արտադրած ապրանքերը:
Սա բուրժուազիայի դժգոհության զլխավոր պատճառ-
ներից մեկն է:

Թայց կոսն նաև ուրիշ մոմենտներ, վորոնք գծա-

հուժեղուն են առաջացնում ազգաբնակչության տուր-
ժուական և մանր բուրժուական շերտերի մեջ: Բուր-
ժուադիլային առանձնապես վրդովեցնում է այն վոր
հնդիկները բարձրագույն պաշտոններ ձեռք բերելու
հնարավորութուններ չունեն: Առատորեն վարձատր-
վող պաշտոնները պետական ապարատում, բանակում
և նս. վարչարմում, գտնվում են անգլիացիներ ձեռքը:

Այս բոլոր շահերը իրենց արտահայտությունը դը-
տան աղբային շարժումների մեջ: Աղբայինականների ա-
վելի ծայրահեղ հոսանքը (վորը դուրս է յեկել Հնդկաս-
տանն անդառնալու անգլիական տիրակալութունից և
հաստատելու հնդկական հողեվորականութան իշխա-
նութունը) անցյալ դարի 90-ական թվականներից ընտ-
րեց տերբորի ճանապարհը: 1897 թվին յեղբայրներ Չի-
նեկարներ ձեռքով սպանված են յեղել 2 անգլիական
չինովնիկներ: Տերբորիստները դատապարտվեցին կախա-
ցանի: Մի քանի տերբորիստական հարձակումներ են
գործվել 1901 թվին: Տերբորի տակտիկական առանձնապես
ուժեղացավ 1908 թ. 1917 թ. Ժամանակաշրջանում:
Այս 10 տարվա ընթացքում, հեղափոխականներից
200-ից ավելին կախազան են բարձրացվել, 5000 դա-
տապարտված են յեղել յերկարատև բանտարկութան
և 40.000-ը ձերբակալութան յենթարկվել:

Մյուս հոսանքը աղբային շարժման մեջ, վորն ա-
ռանձնապես ուժեղացավ 1918-1922 թ. թ., ղլխավոր-
վում է Գանդիով: Այս հոսանքը սերտորեն կապված է
առևտրական բուրժուադիլայի հետ: Գանդին առաջ է
դալիս Հնդկաստանում այսօրես ասած ժողովրդական
կառավարութան հիմնադրման շահերի պաշտպան, ա-
յինքն պահանջում է հնդկական բուրժուադիլայի իշխա-

նության հաստատումը 1918-1922 թ. թ. այս շար-
ժումը խոշոր ծավալ ընդունեց: Այս տարիները Գանդին
դուրս յեկավ քաղաքացիական անհնադանդութան քա-
րողներով: Նա պահանջում էր, վոր կապիտալիստները
դադարեն հարկեր վճարելուց և յեթե կառավարությու-
նը նրանց ունեցվածքը հասարակական անուրդի հանի-
վոչ վոր վոչինչ չզնի:

Հետաքրքրական է նշել այն, վոր այս բոլորի հետ
միասին դանդիստները միշտ ընդդժում են, վոր հողային
տուրքը պետք է վճարել: Այս բոլորը նրանք անում են
նրա համար, վոր վախենում են գյուղացիական շար-
ժումներից, վորը կարող էր ուղղվել հանդեպ հողատե-
րերի, իսկ դանդիստների մեջ կան բավականին խոշոր
հողատերեր: Դրա համար էլ 1918-22 տարիները հայտ-
նի դանդիստ Բոշաջը դադարեց իր ավտոյի հարկը վը-
ճարելուց, սակայն շարունակեց վճարել իր հսկայական
հողային կալվածքների հողային տուրքը, վորոնցից
տարեկան 20 միլիոն ռուպլիցից ավելի յեկամուտ էր ըս-
տանում:

Շարժման հետևյալ կետերից մեկն էլ այն էր, վոր
պահանջում էր փնդլիական իշխանությանը աշխատակ-
ցելուց, այսինքն անցկացնել չինովնիկների, ուսանող-
ների, խանութպանների, վոստիկանութան և բանակի
ընդհանուր աղբային գործադուր:

Յորդ կետը հանդիսանում է ձեռքի գործված քայլին
և մանված քայլին արտադրութան վերականգնումը:
Այս վերջինը նշված է ղլխավորապես գյուղի համար:
Գանդին ուղում է համոզել գյուղացիներին, վոր թվառ
վիճակից դուրս գալու յելքը կարող է գտնվել միմիայն
ձեռքի գործված քայլին արտադրութան վերականգնման
մեջ:

Առաջին յերկու կետերը նկատի ունեն իշխանության
քրա ունեցած հաղթանակը, առանց ճնշումներ գործա-
դրելու ձեւերի ուղղությամբ: Գանդին իր բոլոր յելույթ-
ներում ընդգծում է, վոր նա իր առաջ խնդիր է դրել-
վերացնել ճնշումները: Սակայն պիտի նշել այն, վոր
Գանդին պատերազմի ժամանակ հանդիսանում էր ան-
դիակա՛ն բանակի համար ղինվորները հավաքարարը,
և վոր նա այժմս ել չի հանդիսանում ճնշումներ գործա-
դրելու հակառակորդ, թեկուզ հենց հողատերերի կող-
մից գյուղացիների դանադան յելույթների ժամանակ:

1918-1922 թ. թ. շարժումները խոշոր ծախալ ըն-
դունեցին: Շարժման միացան նաև բանվորական և
գյուղացիական մասսաները, վորոնք անցան Գանդիի
ոահմանած արդելքների վրայով և սկսեցին լայնորեն
ճնշումներ գործադրել: Բիա-Բարում, Գադինուրում,
Փայդարատում, Ուդայում առաջացան հեղափոխական
շարժումներ, սկսվեցին նաև գյուղացիական ապստամ-
բություններ, իսկ Պենջաբում արդեն իսկական հեղա-
փոխություն: Գանդին վախեցավ և սկսեց գուրս դալ
շարժման դեմ: 1921 թ. Հարավային-Հնդկաստանի
փոքրիկ գավառական քաղաք Բարդոլում, գանդիստնե-
րի կողմից բանաձև եր ընդունված, ուր դատապարտ-
վում էին մասսաների այնպիսի հեղափոխական գոր-
ծողությունները, ինչպես փոստիկանների սղանություն-
նը ու փոստիկանական թաղերի հրդեհումները: Գան-
դիստները պահանջեցին հեղափոխական շարժման դա-
դարեցումը: Առանձին ուշադրության է արժանանում
այդ բանաձեւի 5-րդ կետը, վորն ասում է՝ «Գործա-
դիր Կոմիտեն հայտնում է կոնգրեսի կաղմակերպու-
թյուններին և աշխատակիցներին, տեղեկացնելու գյու-

ղացիներին, վոր հողատերերին ունեաա չվճարելը հա-
կատում է կոնգրեսի համոզմունքներին և վնասում յեր-
կրի շահերին»:

Այսպիսով գանդիստները դավաճանեցին շարժմանը,
վախենալով նրա չափազանց լայն ծախալից: Գանդին
բացարձակ խոստովանեց, վոր «քաղաքականապես շատ
վստանգավոր և ողտագործել գործարանային բանվորնե-
րին և գյուղացիներին»: Վորպեսզի մասսաներին հեա
պահել հեղափոխությունից, առաջ բերվեցին՝ ճնշում-
ների դեմ և ձեռքի գործվածքային արտադրության վե-
րահանգնման լողունգները:

Բայց մասսաները չուտով ըմբռնեցին, թե վորքան
կենսական և գործնական չե վերջին լողունգը: Ամենա-
ուժեղ տեքստիլ Ֆաբրիկաների կողքին վերականդնել
ձեռքի գործվածքային արտադրությունը, դա արդեն
դատարկ և անտեղի գործ է:

Ընդհանուր առմամբ 1918-1922 թ. թ. շարժումը
պարտություն կրեց, նրա ղեկավարների դավաճանու-
թյան և խանդարումների հետեանքով: Սակայն Հնդկաս-
տանի հեղափոխական շարժումը չի վերջանում գանդիզ-
մով: Նրա հեա միասին տեղի յեն ունենում բանվորների
և գյուղացիների լայն մասսաների շարժումները, վո-
րոնք զարդանում եյին և դարդանում են ինքնուրույն
կերպով, տարեց-տարի ավելի ու ավելի լայնանալով ու
խորանալով իր ընթացքի մեջ:

ՐԱՆՎՈՐԱԿԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ

Հնդկաստանում ծանր վիճակ է ապրում վոչ միայն
մանր սեփականատեր գյուղացին, ու գյուղատնտեսա-
կան ժանվորը, այլ և քաղաքի պրոլետարիատը: Երբ

կայսրու Հնդկաստանում քաղաքի բանվորությունը հաշվվում է մոտավորապես 4 և կեսից 5 միլիոն: Դեռ 1907 թ. Բոմբեյի տեքստիլ և կաշվուտայի ջուլի Փարքիկաներում, աշխատանքային որը տեղում եր 15-16 և նույնիսկ 17 ժամ: Յերերանների աշխատանքները այսուհի գործադրվում են լայնորեն: Պահեստի հսկայական բանակ ունենալով, կապիտալիստները Հնդկաստանում աններելի անդթությամբ շահագործում էլին բանվորներին:

Այս բոլորը հանդեպ նրան, վոր արդեն 90-ական թվականների վերջերը, այսուհի առաջ յեկան բանվորական գործադուլային շարժումներ և սկսեցին կազմակերպվել պրոֆեսիոնալ միություններ: Մի շարք գործադուլների շնորհիվ հրատարակվեցին նոր բանվորական օրենսդրություններ: Բանվորները ձեռք բերին բանվորական օրվա սահմանափակում, կանոնք և յերեխաների աշխատանքների կարգավորում: Հաճախակի՝ բանվորները իրենց գործադուլներով պաշտպանում էլին ազդային և գյուղացիական շարժումները:

Հետպատերազմյան տարիները բանվորական շարժումն էլ ավելի ուժեղացավ: 1920 թ. Տրեդյունիոնների հնդկական առաջին կոնգրեսում ներկայացված եր միայն մոտ 100 տրեդյունիոն: 1921 թ. 2-րդ կոնգրեսին-ներկայացված է մոտ մեկ միլիոն կազմակերպված բանվոր: 1917 թվից վողջ Հնդկաստանում տարածվող գործադուլների հսկայական ալիքը հանդեպ 11 ժամյա աշխատանքային օրվա սահմանումին, և նոր գործարանային օրենքների հրատարակմանը: 1922-25 թ. թ. գործադուլների շնորհիվ հրատարակվեց օրենք օրենսդրությունների մասին: Այս օրենքով միությունները

1920 թ. լեգալիզացիայի յնթարկվեցին: 1927 թ. գործադուլային պայքարի ճնշման տակ, հրատարակվեցին օրենքներ՝ բանվորներին հաշմանդամության կամ ժահացության դեպքերում փոխհատուցում տալու: Հրատարակվեց նաև օրենք աշխատանքի մասին: 1927 թ. յերկաթուղայինների գործադուլը ցույց և տալիս, թե վորքան բանվորական շարժումները մասսայական բընույթ են ստացել: 1928 թ. գործադուլները խոշոր և լայն ծավալների հասան: Գործադուլայինները կորցրին 35 միլիոն բանվորական օր. բոլոր գործադուլների 35 տոկոսը վերջացավ հաղթանակով: 1929 թ. բոլոր գործադուլները 42 տոկոսը ավարտվեց հաջողությամբ: Այս բոլորը խոսում են հնդկական պրոլետարիատի կազմակերպվածության և գիտակցության աճման մասին:

Գյուղացիական շարժումները Հնդկաստանում դարերով են շարունակվում: Մի շարք ապստամբությունների և հեղափոխությունների մեջ, հնդկական գյուղացին իր անհաշտ տենչությունն և արտահայտել հանդեպ իշխանների, կալվածատերերի, վաշխառուների և անպիտան իմպերիալիստների: Գյուղացիական բոլոր ապստամբություններից ամենախոշորը հանդիսանում է 1852 թ. այսպես կոչված սիպայական «խոռվությունը»: Գյուղացիությունը զգալի մասնակցություն է ունեցել այս ապստամբությանը, և նա զուրս է յեկել ճորտատերերի, կալվածատերերի և վաշխառուների դեմ:

Շատ օրը բնույթ ընդունեցին գյուղացիական շարժումները 1905-11 թ. թ.: Գյուղացիների դժգոհությունների գլխավոր առիթը յեղել է ջրանցքների մոտ ապրամյա հողերի կապալավազմի ետվելուց: Կապալավազմի

ապր շափով գյուղացիները վրդովված ելին նաև վրաստ-
ման վճարը ավելացնելու նախագծից: Պենջարում ձեր-
բակալված գյուղացիների մեջ, ըստ Պենջարի նահան-
գապետի հայտարարության, կային այնպիսիները, «վո-
րոնք Ամերիկայում ձեռք են բերել հավասարության և
գեմակրատիայի դադարները»: Ձերբակալվածների
չարքում գտնվեցին նաև աղյալին-հեղափոխական
չարժման կողմնակիցներ: Ամենահետաքրքիրն այս
չարժման մեջ նա յե, վոր գյուղացիները կողք-կողքի
գնում էին բանվորների հետ: Յերբ Հյուսիս-Արևի-
մտյան յերկաթգծի վրա հայտարարվեց դործադուլ,
գյուղացիները համակրանքների միտինգներ էլին կազ-
մակերպում և դործադուլավորների ուժան զլալի գու-
մարներ էլին հավաքում:

Համաշխարհային պատերազմը և զինվորների բռնի
հավաքը Հնդկաստանում, շատ սուր դժգոհություններ
առաջացրին գյուղում: Չարհուրելի միջոցառումների
ողնությամբ, կառավարությունը հարկադրում եր թրն-
դանոթային միջ մատակարարելու կեղևքիչ պատերազմի
համար: Գրան անմիջապես հաջորդեց 1917-18 թ. թ.
անբերրությունը և ամենախիստ ջերմախտը: Այս բո-
լորը գյուղացիությանը զցեց հուսահատ վիճակի մեջ:
Գանդիպոտների 1) պրոպագանդան կրակը վրա յուղ լըց-
րեց: Սկզբեց ուժեղ շարժում: Հասկանալի յե, վոր գյու-
ղը չեր կարող հետևել Գանդիի դեդատոմսին՝ բռնու-
թյուն չդործադրելու մասին: Պենջարում սկսվեց իսկա-
կան ապստամբություն: Գյուղացիները կարտում էլին
հեռադրալարերը, փչացնում յերկաթուղազծերը, նպա-

1) Պենջարում և Գանդիի կողմնակիցներ:

առակ դիմելով արդեւոյ Եւրոպայում: Գարբերի անդամութե-
մանը:

Անգլիացիները հրով ու սրով սկսեցին խաղաղացնել
գյուղը՝ գործի էլին դրել գրահազնայքները, վորոնք
բնաջինջ էլին անում վողջ գյուղերը: Յերկաթուղային
գծերից ավելի հեռավոր գյուղեր, սավառնակներ էլին
ուղարկվել, վորոնց միջոցով վերելից ումակոծվում է-
լին գյուղերը: Ինչպես մենք նշեցինք, յերբ ապստամ-
բությունը մասսայական բնույթ ընդունեց, գանդիստ-
ները դավաճանեցին նրանց, վոր և պարտության ու
քայքայման հասցրեց գյուղացիական հեղափոխական
չարժումը: Պենջարից շարժումը փոխանցվեց Միացյալ-
գավառները, այնտեղից էլ Բենգալիա և Մալարար: Ա-
մենահոյակապ փաստը այս շարժման մեջ պիտի արձա-
նադրել Մոպալյան գյուղացիների ապստամբությունը:
Նրանք իրենց սահմաններից դուրս վնդեցին անգլիա-
կան ռազմական ուժերը: Հնդկական զինվորները հրա-
ժարվեցին խաղաղեցնելու գյուղերը: Մոպալյան գյու-
ղացիները իրենց անկախ հայտարարեցին Անգլիայից,
վերացրին տուրքերը, անխնա կերպով մաքրեցին վաչ-
խառուններին, վառեցին բոլոր պարտքերի պարտավո-
րությունները: 40 որվա «անկախությունից» հետո,
«կարգը» վերականգնվեց միայն յեվրոպական զորամա-
սերից կազմված ռազմական ուժի շնորհիվ:

ՇԱՐԺՈՒՄԸ 1930 ԹՎԻՆ.

1930 թ. հեղափոխական շարժումն անմիջականու-
րեն կապված է հակայական համաշխարհային ճգնաժա-
մի հետ, վորը ծանր հարվածներ հասցրեց Հնդկաստա-
նի ժողովրդական անտեռությանը: Հնդկաստանը, ինչ-

պէս մենք արդէն նշեցինք, գրեալներուս հումորը և արտահանում, ինչպէս օրինակ-բամբակ, ջուր, ցորեն, թեյ և ձիթապտուղներ: Համաշխարհային ճգնաժամը անասելի ուժեղ չափով կրճատեց նրա արտահանումը: Հնդկաստանի արտաքին վոդը առևտրի դիրքը 1929 թ. համեմատած 1928 թ. հետ, իջավ 190 միլիոն ոսկայի-լով: Հասկանալի յե, վոր դներն ուժեղ կերպով ընկան: Մինչդեռ ինքնարժեքը չհետևելեց դներին:

Գյուղատնտեսական մթերքների մանր արտադրողները չեն կարողանում սպասել դների բարձրացմանը և ստիպված են լինում վաճառել չափազանց ցածր դներով: Ուժեղ կերպով կրճատվեց ներմուծումը, վորովհետև տեղ չնորհիվ ճգնաժամի, ազդարնակության գնողական ունակությունը խիստ ընկնում է:

Այսպիսով վնասվեցին և վաճառականները և արդյունարերողները, նաև գյուղացիները: Բուրժուազիան հասկացավ, վոր Հնդկաստանի դրությունը ճգնաժամի պահին ղալլիորեն պատթարանում է չնորհիվ այն հանգամանքի, վոր նա հանդիսանում և վորպես գաղութ, և վոր Անգլիան ճգնաժամի ամենախոշոր ծանրությունը գնում է նրա ուսերի վրա: Իսկ ամենազլխավորը, բուրժուազիան հասկացավ, վոր ճգնաժամի նման խորը պայմաններում, հեղափոխական շարժումն անխուսափելի յե: Նա շտապեց զլխավորելու նրան, վորպեսզի հետո, հնարավորություն ունենա զլխատելու:

Դարձյալ բեմի վրա հանդես յեկավ Գանդին: Նա մարտ ամսում հայտարարեց, վոր նորից և սկսում քաղաքացիական անհնադանդության շարժումը: Ետժաման հիմնական լողուններն են՝ աղի հարկերի վերացում, դինետների և արտաքին ապրանքների բոյկոտ: Նա կոչ

եք անում խախտել աղի մենաշնորհի վերաբերյալ Երեւոթը, հրավիրելով իր կողմնակիցներին հակառակ որենքի, դանեկ աղի հանքեր և եզտագործել վորտեղ կան նման հնարավորություններ: Նա կազմակերպեց կամավորական ջոկատներ, վորոնք իր հետ միասին պիտի մեկնեյին Ջոլապուր, ծովի ափին աղ ձեռք բերելու: Գան լիի արչավանքը բավական լայն մասսաներ ներդրավեց: Հետաքրքիր է նշել նաև այն, վոր Գանդին արդեն մարտի սկզբներում ամեն կերպ համոզում էր, վոր յերկրում «բոնության վողին» շատ է ուժեղ, և ամեն կերպ կոչ եք անում, վոր պայքարը տանել վոչ բունի գործողություններով:

Միաժամանակ քաղաքներում ուժեղացավ ոտարերկրյա ապրանքների բոյկոտի շարժումը: Հայտնի յե, վոր Մակդոնալդի կառավարությունը շտապեց ձերբակալել Գանդին, նաև նրա մի շարք փոխանորդներին: Ըստ յերեւութին, ինքը Գանդին յերկրորդ անգամ վախեցավ այն «վողուց», վորը նա արթնացրեց իր յելույթով: Այս անգամ գյուղացիները, շատ տեղերում անմիջապես դադարեցին հողային տուրքեր վճարելուց, նաև վոտարիկանությունը պահելու հարկից, և անմիջապես սկսեցին կտրտել հնդկիզեզի անտառները և դրավել արոտավայրերը: Հյուսիս-Արևմուտքում սկսվեցին ապստամբությունները, վորն այսպես կոչված բանվորական կառավարությունն անխնա կերպով վողնչացնելով, խառավարությունն անխնա կերպով վողնչացնելով, խառավարություններ միջոցով: Միաժամանակ սկսեցին խոշոր խոռվություններ քաղաքներում, վորոնցից առայժմ իր աժենափայլուն արտահայտությունն է դասել Եռապուրի ապստամբությունը:

Յեզ նորից Գանդին հանդես Թ գալիս Եամակով, վորտեղ նա «վերցնում է իր վրայից պատասխանատվությունը» տեղի ունեցող բռնությունների համար: Ըստ յերեվոլյութին, նրա կողմից միաժամանակ սկսվել է բռնակցություններն Անդլիայի «բանվորական» կառավարության հետ: Այնուամենայնիվ պիտի կարծել, վոր այս անգամ չի հաջողվի շարժումը տապալել: Չափազանց սուր մոմենտ է ապրում հիմա Հնդկաստանը, և չի կարելի այդ, խորամանկ միջոցներով քողարկել: Սուկալի ծանր է համաշխարհային ճգնաժամը և անհնարին է վորո՞վիս «ռեֆորմներով» սվաղել այն հակայական ինդիքները, վորոնք կանդնել են Հնդկաստանի բանվորների և գյուղացիների առաջ:

Անհրաժեշտ է նշել, վոր 1918-22 թ. թ. դավաճանության փորձը հիշողությունից չի ջնջվի, և վոր այս անգամ գյուղացիներն ու բանվորները շատ շուտ կհասկանան, թե նման վիճակից դուրս գալու յեղը վորն է:

1930 ԹՎԻ ԳԱՆԴԻՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻԱՎԱՆ ՇԱՐժՈՒՄԸ

Կաշխատենք ընդհանուր գծերով նկարագրել Գանդիի 1930 թվի արշավանքը:

Արշավանքը սկսվեց մարտի 12-ին: 10-հազարանոց ամբոխն սղելիցում էր Գանդիի գլխավորությամբ առաջին կամայորական ջոկատը: Ըստ նախագծի, ջոկատը ուղեվորվում էր Կայրա շրջանից Ջալալապուր, ուր կամավորները բաժանվելով 3 հոգուց բաղկացած փոքրիկ խմբակների, պիտի ծովի ափին զանազան տեղերում, ծովի ջուրը յեփացնելով աղ ձեռք բերեցին: Արշավանքի ժամանակ, Գանդին իր ջոկատով իջնվանում

էր դյուղներում, ուր և զբույցներ էր ունենում գյուղացիներին հետ իր արշավանքի նշանակության և նպատակի մասին: Աղղայնականներն ամենուրեք և ամեն տեղ ընդգծում էին, վոր նրանք դեմ են բռնության: Գանդին մի քանի անգամ հայտարարել է, վոր «Հնդկաստանը կոմունիզմի համար հարմար հող չունի»: Գանդիստաներն ենեղիկ կերպով խաղաղ դիմադրության ազդեցության եյին տանում:

Ահա Գանդիի բռնություն գործադրելու անթույլատրելի լինելու մասին մի ժողովում արած իր հայացքների ամենավառ արտահայտությունը:

Բորսադում, մարտի 20-ին, դյուղի միտինգում դուրս գալով Գանդին հայտարարեց՝ «Դուք պետք է դյուղի մոտակա դետից աղ ձեռք բերեք՝ և բաժանեք այդ չքավորներին: Յեթե ձեզ բանտ ուղարկեն, դուք պիտի դնաք «Նամո»-ի (աստված) անունը շուրթերիդ: Յեթե ձեզ ձեծում են, դուք պետք է անտրտունջ տանեք: Յեթե ձեզ դնդակահարում են, դուք պետք է խաղաղությամբ մեռնեք: Դուք ընդունակ եք բռնություններ գործադրելու, բայց դուք պետք է ձեր ձեռքերը խաչած, կամ զրպաններում պահեք: Նման ճանապարհով դուք կազատադրվեք աղի տուրքեր վճարելուց և այլ չարիքներից, վորոնցից դուք տառապում եք, և կհասնեք սվաբաջային»:

(«Լիբերալ» մարտի 28. 1930 թ.)

«Գանդին կամենում է ընդհանուր սկիզբունքի վերածել ինքնադոհարերումը և վոչ բռնությունը: Ներկայումս չկան բռնության ավելի մեծ և ավելի անհաշտ թշնամիներ, ինչպիսիք են Մախատմա Գանդին և կոնգրեսի անդամները: Նրանց «պատերազմը», գաղտնա աչ-

խարհում չունենալով մի պատանդագործ է: Նրանց գեներ վաճ
թե «ատելութունն ու բռնությունն է, այլ անսահման
ինքնազոհարեքումը»: (Բոմբեյ-Կրոնիկա մարտի 25, 1930 թ.)

«Հարկ չկա բացատրելու, վոր ով գուրջ և գալիս
նման ճառերով, յերբ հարցը վերաբերում է մահացու
գեներով զինված իմպերիալիստներին, նա զավաճանում
է շարժմանը և նրա կործանումը նախապատրաստում»:

Սակայն, շարժումը շուտով սկսեց աճել և գուրջ
գալ Գանդիի և նրա կողմնակիցների սահմանած շրջա-
նակները: Այս առթիվ շատ հետաքրքիր են գյուղում
սկսած շարժումների մասին թերթերում լույս տեսած
բաղմաթիվ հազորդագրություններն ու սովյալները:

«Մի շարք գյուղացիներ, հարցրին Գանդիին, թե
ի՞նչ պլանն անեն իրենք Մախմեդարաղի շրջանում, ուր
հողային տուրքերը բարձրացրել են: Մախմեման խոր-
հուրդ սովեց նրանց տուրքեր չվճարելու կամպանիա
սկսել, յեթե նրանք իրենց մեջ ուժ և մեծ հավատ են
զգում»:

Ի պատասխան Գանդիի կոչին Վասնա և Նալադիմ
գյուղերի յերկու ավաղ վոստիկանները հրատարվել են
իրենց պաշտոնից»: (Բոմբեյ-Կրոնիկա մարտի 14, 1930 թ.)

«Կոնսալում 9 տղամարդ և 7 կին աղ ձեռք բերե-
լու համար, տուղանվել են 4 ուսույլյով, չվճարելու
դեպքում 4 որ բանաարկության փոխարինելով: Մեղա-
գրյալները ընտրեցին բանտը: Հայտնում են, վոր կա-
ռավարությունը սովորաբար մասնների արանքոյ էր
նայում չքավորների կողմից աղ ձեռք բերելու, իսկ հե-
մա նա արդեն միջոցների յե գիմում»:

(Բոմբեյ-Կրոնիկա մարտի 15, 1930 թ.)

«Նկատի առնենալով այն, վոր կառավարական հար-
կահավաքների կողմից նկատվել և հաստատվել են անս-
րինակ հարկահանության բաղմաթիվ դեպքեր, Կադար-
Պատկար տալուկի, Պիպրիո գյուղի գյուղացիները վո-
րոչել են հողային տուրքերը վճարել միտք 2. Դատե-
լատրամբ միջոցով, վորը մի քանի օրում չընձեռ և վոյջ
տալուկը»:

Այդ տալուկում հաստատված են դեպքեր, վոր մի
սուպիլի չափ կառավարական հարկ մուծող գյուղացին,
ստիպված է յեղել մոտ 5 ուսույլ չվճարել կառավարա-
կան հավաքարաններին»:

(Բոմբեյ-Կրոնիկա մարտի 6 1930 թ.)

«Բանդարիրում հարկեր չվճարելու կամպանիան
չարունակվում է. Գյուղացիությունը տոկոսներ յայմբ
զիմանում է ձերբակալություններին ու հալածանքնե-
րին: Լիդեր Բամինաղ Բոյը տուղանված է 60 ուսույլով,
չվճարելու դեպքում 1 ամիս բանտարկության փոխարե-
նելով: Մեղադրյալը գերադասեց բանտը»:

Բանդարիրում մահմեդական կնոջը տուղանել են
10 ուսույլով նրա համար, վոր նա ավելով դուրս է վը-
ունդել չինովնիկին, յերբ նա ուղեցել է կովը դուրս
քաչել-նրա ամուսնուց տեղական ինքնավարության
պահպանման համար դանձվելիք հարկի զիմաց»:

(Բոմբեյ-Կրոնիկա մարտի 8, 1930 թ.)

«Բիտնդորե և Մտայա գյուղերում 15 գյուղացի
Ալիպուրի շրջանային չինովնիկի կողմից տուղանվել են
յուրաքանչյուրը 8 աննայի, ապրիլի կերպով աղ ձեռք
բերելու համար»:

Գյուղացիները խոստովանել են իրենց մեղքը և
Տայանել, վոր նրանք չափազանց աղքատ են վորպեսզի

կարողանամ այլ գնել և նրանք այդ մեռած 50 բերել միայն
անձնական գործածութեան համար»:

(«Գործեր» մարտի 16, 1930 թ.)

Ալլահարազ, մարտի 15-ին:

Այսոր միացյալ գավառների կոնդրեսի կոմիտեյի
խորհրդի արտահարգ ժողովում, ընդունված և հե-
տեվյալ բանաձևով՝

«Մորհուրդը յիտորում և անհնադանդութեան կոմի-
տեաներին, կազմակերպել ուր հնարավոր է, հողային
տուրքի կամ ունեւայի չվճարման կամպանիա: Ռենտա
չվճարելու կամպանիա անցկացնելու ժամանակ, խոր-
խուրուր դանում է, վոր շեշտը պիտի դրվի վոչ միայն
բարձրագրած ունեւայի չվճարման, այլ և դոյություն
ունեցող ունեւայի կրճատման վրա»:

(«Բոսթեյ-Կրոնիկ» մարտի 17, 1930 թ.)

Հետաքրքիր է նշել այն, վոր շարժումն առաջին
հերթին տարածվեց կապալառուների մեջ: Բաղմաթիմ
տեղերից լուրեր կան, վոր կապալառուները մասսայա-
կանորեն կամավոր են դրվում: Սրան պիտի ավելացնել
այն, վոր դյուղական ավազները (քոլտվաներ) դյուղը
տիրրոտի եյին յենթարկում: Յեվ չնայած այս բոլո-
րին, դյուղը կենդանի կերպով արձագանքեց դիմա-
դրութեան կանչին: Չինովնիկները վերաբերյալ դյու-
ղացիները սկսեցին դործադրել «իրենց միջոցները»:
Ահա մի քանի տեղեկություններ այդ առթիվ՝

Ջալալպուրից՝

«Փամ առ Փամ աճում է կառավարական չինով-
նիկների դեմ տարվելիք բոյկոտի պրոպականդան»:

Գանդիում և նրա շրջապատ դյուղերում, այդ չի-
նովնիկները բոլորովին բոյկոտի յեն յենթարկվում այդ-

գարնակութեան կողմից: Նրանք ստիպված են իրենց
վրանները խփել դյուղերից հեռա գտնվող մեկուսա-
ցած վայրերում:

Այն տեղերը, ուր անցորդների համար խմելու ջուր
ե պահվում, սեփեղ պահակներ են դրված, վորոնք հա-
մոզում են դյուղացիներին, վոր ինչպիսի պայմաննե-
րումն ել լինի, կառավարական չինովնիկներին ջուր
չտալ: Գյուղացիներին համոզում են ջուր չտալ անգամ
այդ չինովնիկների ձիերին, այն պատճառաբանու-
թյամբ, վոր ջուրը պղծվում է այդ կենդանիներին դիպ-
չելուց, վորոնք մշտապես բնակվում են «վատ» շրջա-
հում: Չինովնիկները ստիպված են մեկուսացած կյանք
վարել խուլ անկյուններում»:

(«Բոսթեյ Կրոնիկ» ապրիլի 7, 1930 թ.)

«Բոսթաղի տալուկում, Բոդայ, Վաղալպուր,
Պանկապուրա, Ռաս Գորվա, Փախեխալուրա դյուղերը
վորոշել են կառավարական չինովնիկների դեմ ընդու-
նել յեռանդուն հասարակական բոյկոտի միջոցներ:
Ներկայումս ուր ել վոր ուղեվորվեն կառավարական
չինովնիկները, նրանք վոչ մի տեղ վո՛չ ջուր և վո՛չ ել
ուտեստեղեն չեն ստանում»:

(«Բոսթեյ Կրոնիկ» մարտի 31, 1930 թ.)

Ստամբուլ, 12-ն հունիսի: «Հարկահաւաքների բոյ-
կոտը Հնդկաստանի դյուղական շրջաններում չափազանց
ուժեղացել է: Մի շարք վայրերում կառավարությունը
ոտիպված է հատուկ միջոցներ ձեռք առնելու իր չինով-
նիկների պաշտպանութեան և քաջալերանքի համար»:

Համաձայն մայիսի 18-ի «Լիդեր» թերթի հայաս-
րաբութեան, կառավարությունը Ջալալպուրի հարկա-
հատման, կառավարությունը Ջալալպուրի հարկա-
հատմանը ասծիկներն ավելացրել է ամիսը 10 սուպլի-

յով: Գյուղացիական ազդարձակութեան վերաբերմուն-
քը այնքան վտանգավոր բնույթ է կրում, վոր ջայադ-
պուրական հարկահաւաքները գեմեցին կառավարու-
թեանը, խնդրելով հարկահաւաքի Ժամանակ, և բնա-
կարանները պահպանելու համար, նրանց վոստիկանա-
կան պահակներ արամադրել» (SUUU):

Ընդոն, 16-ն հունիսի (SUUU): «Քաղաքացիական
անհնազանդութեան կամպանիան Հնդկաստանում մտավ
իր նոր վուլի շրջանը, վորի աչքի ընկնող կողմը բնա-
քոչվում է նրանով, վոր բոյկոտի Ժամանակ արգելվում
է կառավարական շինովնիկներին, զինվորական և վոս-
տիկանական անձանց ուսելիդէն վաճառելը, ջուր կամ
ուրիշ առաջին անհրաժեշտութեան կազմող առարկա-
ներ: Կառավարութեանը վորոշել է, ինչ գնով էլ լինի,
ճնշել բոյկոտը և վերացնել, լիկվիդացիայի յենթարկել
Բոմբեյի գավառի պիկետների կազմակերպութեանը,
զորը համար զորքերի ուժեղ կենտրոնացում է կատար-
վում: Ներկայումս Բոմբեյում գտնվում են անդլիական
և հնդկական զորքերի 7 հետեւակային բաաալիոններ,
զրահապատ ավտոմոբիլներ, թնդանոթներ և հեծելա-
զոր: Բացի դրանից, Դեոլալում (Բոմբեյից 100 մղոն
գեպի հյուսիս-արեւելք) կենտրոնացված են մի քանի
բաաալիոն անդլիական զորամասեր:

Բոմբեյում վոստիկանութեանը նոր խուզարկու-
թեան կատարեց աղգային կոնգրեսի տեղական կոմիտե-
յի շեքի վրա և ձերբակալեց կոմիտեյի քարտուղարին:
Վոստիկանութեանը վնասում է զինվորական խորհրդի
ժյուս անդամներին»:

Բոյկոտի շարժման հզորութեանն աւ զորձնականու-
թեանը խաաաովանում է մինչև իսկ կառավարութեանը «Դեյ

թ ՏեղեգրաՔի» Բոմբեյի թղթակիցը: Նա հարգում
է, վոր տնունդ և ջուր մերժում էյին նույնիսկ հնդիկ
չինովնիկներին: Մի շարք շրջաններում, վոստիկանու-
թեանը գյուղացիութեանից չի կարողանում մթերքներ
ստանալ, և կառավարութեանը ստիպված է բանալ հա-
տակ մթերքների կրպակներ»:

Արա հետ միասին հաճախակի տեղեկութեաններ են
գալիս, վոր գյուղացիները պատրաստ են անցնել Գան-
դիի կողմից դրած պատնէշը: Ըստ «Բոմբեյ-կրոնիկլի»
ժարտի 24-ի հայտարարութեան, Բիխարում գյուղացի-
ների ներկայացուցիչները խնդրեցին Գանդիից—Թույ-
յատրել հրաժարվելու վոստիկանական տուրքի վճարու-
մից: Ղրբին արվեց պատասխան՝ վոր միայն պիտի
սահմանափակվել աղային հարկով: Ահա և մի արեւ
վոչ ավելի պակաս հետաքրքիր տեղեկութեան»

Ձամբուսարի լազեր—«Կենտրոնական գավառի կոն-
գրեսի լիդերները ունեցան դրույց Գանդիի հետ»:

Նրան հայտնեցին, վոր աղային հարկերի դեմ տար-
վող քաղաքացիական անհնազանդութեան կամպանիան
վորը գավառում անիրազորձելի յե, վորովհետև այն-
տեղ միայն մի փոքրիկ տարածութեան կա, ուր կարելի
յե աղ ձեռք բերել, և վոր կենտրոնական գավառներում
միանդամայն հնարավոր է անտառային որենքների
խախտումը:

Կենտրոնական գավառներում արգելված է կառա-
վարութեան կողմից սահմանադժած անտառային տարա-
ժութեան վրա հոտեր արածացնել: Աղգարնակութեանը
չափազանց ծանր գրկանքներ է կրում այս հրապարակած
որենքից: Լիդերներից վոմանք առաջարկեցին, վոր աղ-
գարնակութեանը կարաի հնդկիդեղները, վորը հանդի-

տանում եր կառավարական մեծաշնորհը, այսպիսով
խախտելով անտառային որենքների մյուս վորոշումը Ը :

Գանդին վորոշակի վաչինչ չպատասխանեց, և ինք-
հուրդ տվեց մինչ կամպանիայի սկսելը, խնդրին լու-
ծում տալու համար դիմել բանդիտ Զավախարյային
Նեոույին կամ համահնդկական կոնգրեսի կոմիտեյին» :

(«Բոմբեյ-Կոնգրես» մարտի 21, 1930 թ.)

Անտառային կոնֆերենցիաների հաղորդադրու-
թյունները, վորտեղ քննվում են անտառից ոգտվելու
խնդրում — ուսյոտների (դյուղացիներ) վրա ճնշումներ
գործադրելու խնդիրները, ջուլց են տալիս, վոր դրանք
յեղակի բնույթ չեն կրում : Ահա յերկու նման հաղոր-
դադրություններ՝

«Բոմբեյում կայացավ Տիանա դիտարակիոս») ու-
սյոտներին անտառային վորոշումներով ճնշելու խնդրին
նվիրված կոնֆերենցիան : Կոնֆերենցիայում քննվում
եյին բավականին շատ հին անտառային ճնշումներին վե-
րաբերյալ խնդիրներ : Այդ ճնշումները գոյություն ու-
նեն նաև մի շարք այլ չրջաններում :

Անտառային ճնշումները քննող, 1925 թ. կառավար-
ության կողմից նշանակված կոմիտեն, մի քանի աու-
ջարկներ արեց, վորոնք բոլորն ել մնացին թղթի վրա :

Հարկ չկա ուրեմն դարձանալու, վոր ուսյոտները և
նրանց լիդերները կորցրել են ամեն մի հավատ դեպի
խնդրադրերն ու բողոքները, և ավելի իրական պրոպա-
կանդայի մասին, խորհուրդ են խնդրում Մախաթմա
Գանդիից» : (Բոմբեյ-Կոնգրես» մարտի 26, 1930 թ.)

«Բոմբեյում կայացավ կոնֆերենցիա նվիրված

*) Դիտարակո—ըջան :

Տիանա դիտարակիոս անտառային ճնշումներ չորժա-
րելու խնդիրներին :

Իր ճառում նախադաւ միտար Վարդին հայաարա-
րեց՝ «Յեւ կդարձանայի, ջենարմեններ, յեթե այն բազ-
մաթիվ ճնշումների շարքում, վորը համբերատար տա-
նում ե ուսյոտը, գտնվելին վորեւ նման տանջալից, կե-
ղեքիչ և դայրացուցիչ, ինչպիսիք են անտառային ճն-
շումները : Նրանք մուրացկանության են մասնել նրանց
կյանքը և խանդարել նրանց հանդիտար :

Հնդկաստանի անտառները — ամենահին ժամանակ-
ներից սկսած, մեծ դեր են կատարում հողի մշակման
խնդրում : Անտառից կախում ունենալը, հնդկական
դյուղացիական տնտեսության ամենահիմնական գիծն
ե կապում և դրա համար ել, յերբ առաջին իսկ չրջա-
նում բրիտանական իշխանության կողմից անդթարա-
խախտվեց այդ փոխադարձ կախումը — անտառի և հո-
դի մշակման, այն ժամանակ դյուղացին իրեն գգաց
ինչպես ձուկը ցամաքում :

Դուք լավ դիտեք, թե ինչպեւ անտառային կենդա-
նիները վորնչացնում են ձեր բերքի ամենալավ մասերը,
և կառավարությունը ձեզ դենքի անհրաժեշտ չափով
թուլլումութուն յի տալիս : Հետո «համայնքային»
պատմի ձեւը անտառային չինոյնիկների ձեռքին կե-
ղեքման իսկական դենք դառավ : Դուք շատ լավ դիտեք
նաև բաղձաթիվ այն ճնշումների մասին, վոր դուք
նաև կատարակտների ուսյոտների հետ հավասար չա-
մյուս դիտարակտների ուսյոտների հետ հավասար չա-
փով տանում եք, և դրան ավելացրած դուք զրկված
եք ձեր սեփական հողի վրա բուսած ծառերի սեփակու-
նության իրավունքից : Անհրաժեշտ ե առանձնացնել
«վորք անտառների» (ավելի քիչ յեկամաբար անտառ-

ձեռք) Համապատասխան աստիճանաթիվները պետք է առնու-
անսական անտառների համար, վորպեսզի բավարարել
գյուղատնտեսական աղագրականությունն պահանջները, և
այդ աստիճանները պիտի աղատվեն անտառային
վարչություն ուղղակի և անուղղակի հսկողությունից:

Յերկրորդ անհրաժեշտ և կարեւոր ռեֆորմը— դա
անտառային դեպարտամենտի վերահսկողությունից ա-
զատած «վորք անտառների» կառավարելը հանձնել աղ-
ագրականության կողմից ընտրված անտառային պանչա-
յաններին (խորհուրդներ), ինչպես դա մեծ հաջողու-
թյամբ և լավ արդյունքներով անց է կացված Մադր-
բաումը: (Բժամբայ Կրոնիկ)

Ահա և հարկերի խնդրով հրավիրված կոնֆերեն-
ցիայի մասին հաղորդագրությունը, վորը ցույց է տա-
լիս, թե գյուղացիները հարցը ինչպես սուր են դնում և
վորքան նրանք նահանջում են Գանդիի քարոզներից:

Այլահարադ, մարտի 18:

Բնառնայի շրջանում մարտի 17-ին հարկային խն-
դիրներին նվիրված կոնֆերենցիան սկսեց իրեն նիստե-
րը: Ներկա էին մեծ թվով գյուղացի պատգամավոր-
ներ: Նախագահում էր միստր Շիպրակասան: Կոնֆե-
րենցիայի ներկաների և յեւույթ ունեցողների թվում
գտնվում էին Ջավախարբալ Ներուն և բժիշկ Սայիդ-
Մահմուդը:

Կոնֆերենցիան ընդունեց բանաձև, վորը պաշտ-
պանում էր Լազարի կոնգրեսի վորոշումը, ուր հայաս-
րաբված էր, թե գյուղացիների ատոնապանքներն ու
աղագրությունը չեն վերացվի՝ մինչև չհաստատվի
Պանչայատ Առջ (խորհրդային կառավարություն):

Կոնֆերենցիան վորոշեց Գանդիի արշավանքը, և
վորով դիմեց գյուղացիներին լայնորեն մասնակցելու
կամ պանիային:

Կոնֆերենցիան վորոշեց, վոր ՎՄԱԿայի կարողային
ոհոտեմն անիրավացի յե և ծանր, վոր պահանջվում է
հիմնական փոփոխություն կատարել, վորպեսզի թեթե-
վացնել գյուղացիներին տանջանքները, վոր գյուղացի-
ները պիտի հրաժարվեն հողային տուրքի նոր հավե-
րումներ ընդունելուց, և յեթե նրանք յենթարկվեն հա-
րածանքների, տյն ժամանակ նրանք պիտի հրաժարվեն
բալոր տեսակի ռենտաների վճարումներից:

Գյուղացիներին առաջարկված էր սկսել վորչ բունի
գիմադրության կամ պանիան Մախաթմա Գանդիի ձեռ-
բակալման գեպում և շարունակել մինչև Մախաթմայի
ազատ արձակելը: (Բժամբայ Կրոնիկ) մարտի 20, 19 0 թ.):

Հենց վերջին ժամանակները, թերթերը բաղմաթիվ
հաղորդագրություններ էյին գետեղում հողային խոտ-
վությունների մասին: Բնորոշիչ է այն, վոր անկարողու-
թյունների մեջ մասնակցում էյին նաև մահմեդական-
ները:

Ահա նման մի հաղորդագրություն՝

Ստամբուլ, 1-ն հունիսի:

«Պանորում, «նինդու» թերթի թղթակիցը հայտ-
նում է, վոր Մադրասի դավառի (Մապլասցա) Մալա-
բարսի շրջանի մահմեդական աղագրականությունն աղ-
տիլորեն պաշտպանում է քաղաքացիական անհնազան-
դության կամ պանիան: Մապլասցիները մոտ շարժու-
մը աղագրային խոտվությունների բնույթ է կրում:
Մապլասցիների 90 տոկոսը հողագուրդ գյուղացիներ
են:

Պետ. 1921 թ. նրանք ապագամբում թարգմանաբար
բին, վորը 6 ամսվա ընթացքում հաղիվ ենչվեց: Մոտ
3000 գյուղացիներ այն ժամանակ գնդակահարվեցին,
իսկ 2000-ն իրենց ընտանիքների հետ արտաքսվեցին
Արաւլյան ծովի Անդամանյան կղզիները:

Հյուսիսային Հնդկաստանում, ուր կառավարու-
թյան դեմ եր ուղղված շարժումը, նույնպիս ընդունեց
ագրարային խռովությունների բնույթ. մահմեդական-
ների մասնակցութունը բավականին զգալի յե: Պայ-
քարի մեջ մասնակցում են մեծ թվով մահմեդական կա-
նայք» (SUUU):

Քանի գնում ավելի համախափի հեռադրեր են ըս-
տացվում վոստիկանական ջոկատների վրա գործած
հարձակումների, բաղխումների և գինված ընդհարում-
ների մասին: Մենք արդեն վերևում խոսեցինք Հյուսիս-
Արեւմտյան սահմանամերձ դավառներում տեղի ունե-
ցող խռովությունների մասին, ուր անգլիացիները ան-
ընդհատ պատժիչ արշավախմբեր են ուղարկում: Մենք,
գեթբախտաբար մանրամասն տեղեկություններ չունենք
այդ խռովությունների մասին: Բայց այնուամենայ-
նիվ, թերթերի հաղորդագրության հիման վրա, կարե-
լի յե համարձակ ասել, վոր ըստ յերևութին նրանք չեն
թուլանում: Հունիսի 1-ի հեռադրերը հաղորդում եյին,
վոր խռովությունները բրիտանական գավառներից
վոխադրվում եյին տեղական ազգային անբխորիան,
վոր տեղական իշխանների կողմից ապստամբների
դեմ առնված միջոցները չեն ողնում: Հունիսի 24-ի
հեռադրերը հաղորդում եյին, վոր գյուղացիական
ապստամբությունները տարածվել են Վաղխրիտոսնի
վրա:

Ուստի, չափազանց ընտանի և այն, վոր կալվածա-
տիրական կաղմակերպությունները բռնկված են խիստ
հուզումներով, վոր նրանք հավաստիացնում են կա-
ռավարության իրենց պատգամատակամություն մասին

«յերկրում որենքն ու կարգը սահպանելու համար դոր-
ծողովելիք բոլոր միջոցառումներին լիովին սժանդա-
կելու»: Կյանքի ու մահվան հարց ե դրված: Նրանք
չատ պարզ տեսնում են, վոր Հնդկաստանում տեղի յե
ունենալու գյուղացիական հեղափոխություն: Քանի
գնում ավելի շատ են պարզում իրենց համար իրական
դրությունը նաև գյուղացիները: Նրանք տեսնում են,
վոր իշխանները, կալվածատերերն ու անգլիական իմ-
պերիալիստները միասնական Ֆրոնտ են կաղմել. նը-
րանք տեսնում են, վոր հող ձեռք բերել նրանք կարող
են միայն կալվածատերերի և անգլիացիների դեմ ընդ-
հանուր ապստամբություն բարձրացնելով: Նրանք փոր-
ձով կսովորեն, վոր բուրժուական և մանր բուրժուա-
կան ազգայնականները, կոչ անելով նրանց, առանց
բռնի ուժ գործադրվող պայքարին, նրանց անխղճորեն
խաբում են և դավաճանում: Քանի գնում, նրանք ավե-
լի յեն համոզվում, վոր գյուղացիների միակ հավա-
տարիմ դեկավարն ու անհատիցը-տեղական և արտա-
քին հարստահարողները դեմ մղվելիք պայքարում, դա-
րանվոր դասակարգը, և վոր արդատագործան միակ ճա-
նապարհը—հեղափոխությունն է:



	Եջ
Անգլիան և Հնդկաստանը	3
Ազգաբնակչությունը	6
Հնդկաստանի գրավումը	12
Անգլիական սևտեսական ֆադաֆականությունը	14
Գյուղատնտեսությունը և գյուղացիության վիճակը	19
Ինչո՞ւ յե հետամնաց Հնդկաստանի գյուղատնտեսությունը.	22
Հողային կառուցվածքը	25
Պարտեերի ծանրաբեռնվածությունը	33
Հնդկաստանի գյուղացիության բշվառ վիճակը	36
Հեղափոխական շարժումը	41
Բանվորական և գյուղացիական շարժումը.	45
Շարժումը 1930 թվին	49
1930 թ. Գանդիի արշավանքը և գյուղացիական շարժումը	52



ԳՐԻՆԸ 20 Կ. (2 Ժ.)

15.964



Я. ШИЛОВ

КАК ЖИВЕТ КРЕСТЬЯНСТВО В ИНДИИ

Госиздат ССР Армении
Эривань—1931